

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՓԵՏՐՈՒԱՐ 8

ԹԻԻ 3898

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 8 ՓԵՏՐՈՒԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՑՈՒՄՆ

ԿԱՌԱՍՐՈՅ ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ

Վերջապէս Ռուսաստանէն հասած մասնաւոր նամակներ աւետեցին մեզ Կաւկասիոյ վարժարանաց բացումն, որոյ համար չենք կարող զսպել մեր ուրախութեան ազաղակն եւ որոյ համար պարտինք դռնութեան ցոյց մը տալ առ Նորին Վեհափառութիւնն Մակար Կաթողիկոս :

Պիւոյ հայ լրագրաց էջերը զրեթէ տարի մը առաջ շարունակ կը լեցուէին այն տըխուր եւ սրտաճմիրի թղթակցութեամբ որով զրեթէ մի առ մի կը պատմուէին դժբաղդ երիտասարդութեան մը վարժարանէն արտաքսման մանրամասն պարագայները : Տակաւին մեր ականջին կը հնչեն այն երկար թղթակցութեանց շարքին մէջ պատմուած ռուսահայ ուսուցչական մարմնոյն աղաղակներն, որ իւր մարդասիրական նպատակին հասնելու համար ճգնած ժամուն անգործ եւ անօթի սալայատակին վրայ մնալու կը դատապարտուէր եւ չենք մոռցած մի քանի տարաբաղդ դէպքեր, որք ազգասիրական զգացմանց մէջ յուզեալ եւ վիրաւորեալ իրենց կեանքը վրայ տուին :

Մակայն վերջապէս արգարութիւնն յաղթանակեց : Ռուս պաշտօնէին զարկած կը նիւրը կը քակուի, և վարժարանին դռները

կը բացուին դրեթէ մի տարի փակ մնալէ վերջ :

Մանրամասնօրէն չենք դիտեր թէ ինչ պայմաններու ներքեւ լուծուեցաւ այս կրնճ-ռոտ խնդիրն, թէ ռուսահայ վարժարանք նոյնն են ինչ որ էին նախ քան զփակումն եւ թէ ի՞նչ ճիգեր, ի՞նչ ազդեցութիւններ ի գործ դրուեցան բռնապետական որոշման մը գործադրութիւնն արգիլելու համար : Սակայն ականերեւ է թէ Ն. Վեհափառութիւն Մակար Կաթողիկոսի աշխատութեամբ ամենայն ինչ կարգադրուած է եւ դռն ենք տեսնելով թէ նոր Կաթողիկոսն կ'ընէ ինչ որ Կաթողիկոսէ մը կ'ականկալուի :

Արգարեւ, ոմանք կրնան, ընտրական գործողութեանց մէջ պարտելոց կողմն ըլլալով նորընտիր Կաթողիկոսին վրայ մեծ համակրութիւն չունենալ, եւ ըսել թէ այս փայլուն գործն կատարել նորա պարտաւորութիւնն էր եւ ոչ այլ ինչ, եւ թէ ամեն Կաթողիկոս կրնար ընել այսքանը :

Մեզ համար մութ է այն կէտը, թէ ամեն Կաթողիկոս կրնա՞ր վարժարանները բանալ. սակայն, ընդունելով թէ Կաթողիկոսի մը պարտքն է վարժարանաց վրայ հսկել, չենք կարող չգնահատել այնպիսի գործ մը որ մեր պատմութեան մէջ եզական դէպքերու կարգէն է : Մակար Կաթողիկոս, եթէ ունէր ընդդիմախօսներ, սոքա կամ անձնական պատճառներով զինքն չէին ուղեր եւ կամ ազգասիրական համոզմամբ : Մեզ փոյթ չէ կարեւորութիւն տալ անձնական զգացումներու, սակայն ազգասիրական զգացմամբ զՄակար չուզողներն այժմ պարտին բարեկամ ըլլալ Նորին, ինչու որ իրենց ընտրելիք Կաթողիկոսէն գլխաւորապէս պահանջելի գործն այժմեան կաթո-

ղիկոսն կատարեց եւ Ա. Էջմիածնայ վանքին մէջ օր ըստ օրէ կատարուած նորանոր բարեկարգութեանց պատմութիւնն պարբերաբար Ռուսիոյ մամուլոյն եւ թղթակցութեանց միջոցաւ լսելով, ակն յանդիման է թէ նորընտիր Կաթողիկոսն կը գործէ անդադար :

Ահա՛ այս նկատողութիւններով ուրախութեամբ կը տեսնենք թէ Ազգային ժողովն, հակառակ իւր ընտրական քուէին մերժման, խաղաղարար ոգւով մը երբ ընդունեց Մակար Սրբազանն իբր Կաթողիկոս ամենայն Հայոց, այժմ՝ օգուտներ կը տեսնէ այս որոշումէն բղխեալ եւ Հայ Երեսփոխանութեան մեծամասնութեան իւր կորովի վարմունքով չսխալած ըլլալն այժմ կ'ապացուցուի : Ո գիտէ տակաւին որքան ամիսներ փակեալ պիտի մնային այդ վարժարանք, եթէ յաջողէին կողմնակցական ոգւով շարժող կարգ մը անձանց ծրագիրներն եւ ընտրեալ Կաթողիկոսն շունենար այն բարոյական հզօր ազդեցութիւնն զոր Ամենայն Հայոց Կաթողիկոս մը միայն կրնայ ունենալ :

Անձնագէտ, Մակար Կաթողիկոսին համար եւս մեծ պատիւ է վարժարանաց վերաբացման մէջ իւր ձեռք բերած յաջողութիւնն, ինչու որ, ինչպէս Հայ Պատմութեան մէջ պիտի անցնի իւր Կաթողիկոսացման պատմութիւնն ամեն ցաւալի միջադէպերով, նմանապէս նոյն պատմութեան մէջ պիտի անցնի իւր ազգասիրական այս մեծ գործն, որոյ համար Հայ ազգը ընդհանրապէս գոհ է իրմէ եւ Պոլսոյ Հայ լրագրութիւնն ալ ոչ նուազ ուրախ տեսնելով թէ Ն. Ահաբաբովութեան Կաթողիկոսացման համար ըրած քանքերն արդիւնաբեր եղան :

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՊԱՐԵՊԻՆ Ծ. Վ. ՄՐՈՒԱՆՅՏՏԵԱՆՅԻ

ԱՌ ՀԱՄՕՐԷՆ ՎԻՃԱԿՍ ՏՐԱՊԻՋՈՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Հաւատացեալ
Միբեւեացդ մերոց Առաջնորդութեան Հայոց Տրապիզոնի վիճակիս՝ Քաղաքաց եւ Գիւղորէից Արժանապատիւ Եկեղեցականաց, Պատուարժան Թաղական Խորհրդոց, Յարգելի Աթոռակալաց, եւ առ հասարակ ժողովրդականաց արանց եւ կանանց, մեծաց եւ փոքունց, պատուականացդ մերոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր ողջոյն եւ խաղաղութիւն :

Մեր պաշտօնի պարտականութիւն եւ մեր հոգւոյ փափաքն լինելով Ձեր ամենեցուն կենաց երջանկութիւնը հոգալ, կը խնդրեմ յօժար սրտիւ եւ ուշի ուշով՝ ունկնդնէք այս գրուածքիս, եւ ընդունիք, եւ կատարէք :

Օրհնեաց Աստուած եւ ասէ՛. « Աճեցէք եւ բազմացարուք, լցէք զերկիր եւ տիրեցէք դմա » :

Աստուածային հայրական եւ նախախնամական օրհնութիւնն է այս՝ մարդկային ազգին համար . եւ այս օրհնութիւնը կը վերաբերի ամուսնական խորհրդոյն : Ուրեմն ամուսնութիւնը Արարչին Աստուծոյ օրհնութիւնն է, եւ այդ օրհնութեան արժանի եղող մարդն երանելի է, վայելելով իր տան մէջը խաղաղութիւն ընտանեկան, քաղցրութիւն զաւակաց, բարութիւն երկրի, առողջութիւն անձին, պատիւ ընկերութեան մէջ, ապրուստ անկարօտ, եւ յոյս անտարակոյս երկնային արքայութեան յաւիտենական կենաց :

Ամուսնական սրբութիւնն եւ երջանկութիւնն առաւել եւս նուիրագործուած է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Սուրբ Առաքելոց կենարար բանիւ, նկատելով զայն մարդկային ազգի համար միակ մխիթարութիւն այս աշխարհիս պէս պէս փշտաց եւ տառապանաց օրերու մէջ յարուցանելով որդիս վասն Աստուծոյ, վասն Ազգին, վասն տան իւրեանց, օգնական լինելով միմեանց :

Ըստ այսմ, այրը պիտի ունենայ սէր, կինը պիտի ունենայ գուլթ, եւ զաւակունք պիտի լինին անոնց բերկրութիւնն:

Սէ՛ր, գուլթ, եւ բերկրա՛նք, ահա ամուսնութեան նշանակութիւնն, ահա օրհնեալ ընտանիք:

Սուրբ Եկեղեցին ի սկզբանէ հետէ մեծ խնամք տարած է քրիստոնեայ ազգաց համար ամուսնութեան կանոններ հաստատել, Սուրբ Հայրապետք մեծ փոյթ ունեցած են ամուսնական օրինաց համար հսկել եւ գրել, Հայաստանեայց սուրբ Առաքեալք եւ առաքելանման սրբազան Հայրք մանաւանդ առաւել հոգացած են իրենց ժողովուրդը, և սքանչելի վարդապետութիւն, կանոն, պատուէր թողած են մեզ ամուսնական սուրբ խորհրդոյն համար: Այս ըսկըսեալ ի սուրբ Թադէոս եւ Բարթողիմէոս Առաքելոց, ի սուրբ Լուսաւորչէն եւ յորդուոց եւ թողանց նորին, ի սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, եւ յանգուգական հօրէն մերմէ Ներսիսէ Շնորհալոյ, եւ յայլոց հարց, եւ ի սրբազումար ժողովոց տուեալ հաստատեալ օրէնքներ ունիմք Հայ քրիստոնեայքս, որոցմով կը վարուիմք ցայսօր, եւ որոց ամենեցուն փոյթն ու փափաքն եղած է երջանիկ ընել Ազգն: Հնազանդինք անոնց:

Եթէ փոխանակ աճելու և բազմանալով կը նուազի հայ ազգն, պատճառն ամուսնութեան օրինաց եղծումն է:

Եթէ երկրի բարիքներէն եւ ազգաց հաւասար իրաւունքներէն զրկեալ է հայ ազգն, պատճառը ամուսնութեան օրինաց եղծումն է:

Եթէ աղքատացած եմք յոյժ և եմք տառապեալ յաւնեայն երկրի այսօր, այդ մեղքն ամուսնութեան օրինաց եղծումն է:

Այո՛ այդ մեղքը տուները կը փչացնէ, ընտանիք ի սատակումն կը մատնէ, մարդը խեղճ եւ հանճարէ կը թափէ, հոգին կը մաշեցնէ, յոյսը կը հատցնէ, ստացուածքէ կը կողոպտէ, մարմինը կը կեղեքէ, երիտասարդութիւնը պէս պէս ախտերով կը չարչարէ եւ կ'սպանանէ անարգ մահուամբ: Այդ մեղքն է որ ազգեր կ'սպառնէ, եւ անոնք իրենց ապականութեամբ կը կորսուին կը ջնջուին անհետ անսերունդ՝ հողագործիւս երեւոյն: Չարհուրելի՛ հետեւանք, այլ

սակայն բացարձակ ճշմարտութիւն է:

Նոյայ դարուն ջրհեղեղ, եւ Գոմորայ երկնատեղաց կրակներ վրանիս թափելու հարկ չկայ: առանց անոնց՝ մարդ ինքնին ջուր կը կտրի, կը խեղդուի, կ'ապականուի, մարդ ինքնին իր կրակով կ'այրի եւ մոխիր կը դառնայ, եթէ կը մեղանչէ ամուսնութեան պայմաններու: Փորձեր կըրնան տեսնալ ամենքը իրենց վրայ կամ այլոց վրայ:

Տարակոյս չ'ունիմ թէ ամեն ոք՝ որ միտք ունի, կը հասկնայ, որ հոգի ունի՝ կ'ըզգայ, թէ ժողովրդեան մը կամ ազգի մը արմատն ու հիմն՝ ընտանիքն է, տունն է, հայր ու մայրն եւ անոնց զաւակներն են, իրրեւ գետ մը՝ որ կը կազմուի մեծ եւ փոքոր աղբիւրներէ եւ աճելով կը ծովանայ հզօրապէս ուղղելով իւր ուղիւր և ընթացքը երկրի վրայ, եւ օգտակար լինելով իւր գտնուած գաւառին, և օժանդակելով ծովուն, թագաւորութեան ջուրը: Խանգարէ աղբերաց ակունքը, կը նուազի գետը եւ կ'սպառնի: Այսպէս երբ խանգարուին ընտանեկան կեանքը, ամուսնութեան խանգարմամբ, կը մնասուի եւ կը դադարի այն ազգին ընթացքն եւ կեանքը: Երկրի վրայ մնացող անցորդները պիտի ցոյց տան իրարու այն տեղն՝ ուր այդ ազգը կը բնակէր, եւ պատմութեան մէջ այն էջը՝ ուր այդ ազգին կեանքն ու գործքերը կը գրուէր, եւ պիտի ըսեն. « Երբեմն գետ էր այս, այժմ երկիր ցամաք եւ անբոյս. երբեմն ազգ էր սա բազմաթիւ, գործօն, կենդանի, այժմ անհետ եղած»: Եւ այս պատճառով կորսուած մարդուն կամ ազգին վրայ ոչ ազգեր պիտի ցաւակցին եւ ոչ Աստուած պիտի գթայ: Քանզի անձնասպանութիւնն է այս, անձնասպանն գթութեան եւ օրհնութեան արժանի չէ, զերեզման անգամ չ'կայ անոր, խուսկ անգամ չեն ծխեր անոր շիրմին վրայ, եւ այդպիսեոյն յիշատակ՝ նախատինք է իւր մնացորդաց:

Ամուսնացեալք, կամ անոնք որ պիտի ամուսնանան, կոչումն ունին գործել՝ զերկիր: Փորձել զերկիր՝ կը նշանակէ երկրիս վրայ գործ գործել, որով կարելի լինի ապրիլ եւ ապրեցնել, թէ՛ երկրագործութեամբ եւ թէ՛ արհեստներով:

Ոչ թէ անէծք, այլ քաղցր օրհնութիւն

մի է մարդոյն համար Աստուծոյ խօսքը .
« Գրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո » :

Մարդ մը որ չ'քրտնելու համար, ծոյլ եւ անդործ կը մնայ աշխարհիս երեսին, հացի կարօտ կը մնայ . հացի անարժան է արդարեւ այնպիսին, կենաց անարժան, եւ որովհետեւ ամուսնութիւնն է կեանք, կեանքի պայմանն է հաց, հաց ունենալու պայմանն է աշխատութիւն, ուստի ծուլութեամբ, անառակութեամբ հացի կարօտ մարդն անարժան է ամուսնութեան :

Անդործ եւ անառակ անձինք իրենց կեանքը զգուելի ընելէն զկնի, իրենց ըստացուածքը վատնելէն զկնի, իրենց տունը կը լեցնեն աղմուկներով, կազ ու կռիւներով, գանակոծութեամբ, հայհոյութեամբ, կարօտութեամբ եւ դառն արտասուքներով : Այն ինչ ընտանիք ու զաւակունքը հացի կ'սպասեն, կ'սկսին անիծանել, լալ, գոռալ, տունէն փախչիլ, փողոցը կամ այլ տուն մը ապաստանիլ, անոնց աղաղակէն կը վազէ ամբոխը, կը ցաւի տառապելոց, կը նզովէ անառակն ու անդործը, որ այդ ժամուն կամ արբած է կամ կատաղած, եւ կը կարծէ թէ իր բացարձակ իրաւունքն է զրկել, ծեծել, մինչեւ իսկ սպանանել իւր ամուսինն ու զաւակը : Կայէնի՜ սերունդ :

Ամուսնութիւնն է այս, օրհնութիւն կա՞յ այս . մարդուն վրայ : Աստուածային կամ քաղաքական ո՞ր օրէնք արտօնած է իրեն կռիւհարել կինը, ընտանիքը, դուրս ձգել զաւակները, փոխանակ սիրելու, փոխանակ զանոնք հոգալու, փոխանակ դժուելու, փոխանակ անոնց մարմնական եւ հոգեկան վիճակը կրթելու եւ բարւոյցելու :

Նոյն բանն է նաեւ կանանց համար, որոց սարտականութիւնը փոքր կ'երեւի, բայց ընդհակառակն կարի մեծ է իրբեւ մայր :

Մայրն է որ իւր որդեկին ջամբած կաթին հետ՝ կը ջամբէ անոր նաեւ բարոյականութեան կամ անբարոյականութեան կըրթութիւնն իւր մայրական խօսքերով եւ իւր անձին օրինակաւ :

Մայրերն են որ իրենց որդիք կ'ընեն անառակ կամ սպտոռաւոր, թշուառ կամ երջանիկ :

Մայրն է որ իւր անմեղուկ մանկան շըր-

թունքը կը բանայ եւ հագագել կուտայ անոր օրհնութիւն կամ հայհոյանք :

Մայրն է որ մանկան աչերը կը վարժեցնէ՝ նայելու բարւոյն կամ չարին : Մայրը կարկառել կուտայ մանկան դաստակները՝ պատուականին կամ անարգին, կ'արձակէ անոր ոտները՝ ձեռքէն բռնելով ընթացնելու ուղիղ կամ խտոր : Նոյնպէս եւ անոր մտքին ու հոգւոյն ընթացքը կ'ուղղէ կամ կը մոլորեցնէ մայրն : Բարեհամբաւ մօր մը դստերը նախանձելի կը լինին, եւ բազումք կը խնդրեն իրենց հարսնութեան, բազումք նաեւ իրենց դստերքը կը փափաքին տալ այնպիսի մօր մը որդւոց : Արդարեւ ճշմարիտ նախանձ եւ ճշմարիտ փափաք :

Բարեհամբաւ մօր մը կամ կնոջ մը տունը, տո՛ւն է աստուածաշնորհութեան, բարոյականութեան, աշխատասիրութեան, կրթութեան, տուն է առողջութեան, տուն ուրախութեան, ի մի բան՝ կատարեալ երջանկութեան :

Կիներէն կը պահանջուի համեստութիւն, համբերութիւն, զգաստ եւ արթուն լինիլ, լաւապէս տնտեսել, խնայել, աւելորդ ծախուց, աւելորդ զարդուց զգուշանալ, ո՛չ զրկել եւ ո՛չ չաւայել : Իր ամուսնոյն, իր մայրութեան, իր տանտիրկնութեան ջերմ հաւատարիմ մնալ, ճանչնալով թէ ինքն օգնական կոչուած է իւր առն . եւ իրենց անձնական ու տնական սարքերը հաւասար են միմեանց :

Փանի՞ անտանելի է կնոջ մը անզգամութիւն, քանի՞ աղետալի է կնոջ մը անհաւատարմութիւն, անսարկեչտութիւն : Սոսկալի՜ արդ տրեւ :

Այդպիսիք են որ սլատճառ կուտան իրենց տանց կործանման, կը փախչին, կը հեռանան այրերը տներէն, զաւակները մայրէն, եւ օտարութեան եւ աղքատութեան մէջ մաշելով, կամ յուսահատելով, կերպ կերպ մոլութեանց ու կորստեան կը մատնեն զիրենք :

Ամուսնութեան դրախտին չար օձն է անզգամ կինը, իսկ կին սարկեչտ եւ ժրագլուխ՝ պսակ է՝ առն իւրում :

Ահա կը տեսնաք թէ ամուսնական օրէնքն է օրէնք բարոյականութեան, օրէնք տնտեսագիտութեան, օրէնք կրթութեան, օրէնք անձանց եւ ազգաց վրկութեան :

Անշուշտ եւմ ուրեմն որ կը խնայէք Ձեր անձանց կորուստը, կը խնայէք Ազգին կորուստը, չէք ուզեր որ հիւանդ լինիք, չէք ուզեր որ աղքատ լինիք, չէք ուզեր որ կըռիւ եւ աղմուկ ունենաք, չէք ուզեր որ անպատուութիւն դայ ձեզի, չէք ուզեր որ ձեր զաւակները չարութեան օրինակ աւնուն իրենց հօրէն ու մօրէն եւ լինին անառակներ ի պատուհաս ծնողաց եւ ի ցաւ ազգին, չէք ուզեր որ Աստուծոյ օրհնութենէն, երկրիս բարիքներէն եւ երկնից յոյսէն զրկուիք, չէք ուզեր որ խելքերնիդ կորսուի, խղճերնիդ խռովի եւ հոգւով ու մարմնով տանջուիք, եայլն. ուրեմն ամուսնութեան օրինաց հպատակ կացէք, զորս կը համառօտեմ ահաւասիկ:

Ա. — Ձանացէք ամուսնացնել ձեր զաւակները, բայց սարսափեցէք ազգականի, մերձաւորի եւ սուրբ Օրինաց արգիլած ամուսնութենէ, որ կը տանջէ մարդոց մարմինը, կը փճացնէ այն տունը, եւ կը դատաւարտէ զհոգին:

Բ. — Փեսայացուն քսան տարեկանէն պակաս եւ հարսնացուն տասն ու վեց տարեկանէն պակաս մի նշանէք, մի պսակէք, որովհետեւ ամուսնական տարիքին հասած չլինելով, կերպ կերպ հիւանդութեանց ենթակայ կը լինին, անորդի կը մնան, և շատեր վաղաժամ կը մեռնին:

Գ. — Անբժշկելի հիւանդութիւն կամ գէշ ախտ ունեցողները թէ՛ այր թէ՛ կին, մի՛ նշանէք, մի՛ պսակէք, որովհետեւ ամուսնանալով՝ իրենք իրարու զոհ գնալէն ի դատ, եթէ զաւակ ունենան, զաւակին աւելի ախտաւոր կը լինին, եւ ուրիշ գէշութիւն ալ կը պատահի:

Դ. — Տարիքը մեծ եղողը՝ փոքր տարիք ունեցողի հետ մի՛ նշանէք, և մի՛ պսակէք, որովհետեւ անբնական է, եւ հետեւանք կը լինի գեղահոգութիւն իրարմէ, կասկած, անհաւատարմութիւն, եւ վերջապէս քակտումն միութեան, եւ այլ մեծամեծ չարիք, զորոս ամեն ոք կրնայ հասկնալ:

Ե. — Ծնողք կամ մերձաւոր ազգականը միայն իրենց ընտրութեամբ ու կամքով չը նշանեն եւ չպսակեն իրենց զաւակները, այլ փեսայացուն եւ հարսնացուն պէտք է մէկգմէկ տեսնան եւ իրենց հաւանութիւնը

տան, որովհետեւ առանց ասոր՝ պսակեալներու մէջ շատ անգամ անսիրելութիւն կը պատահի, եւ ծանր ծանր հետեւանքներ յառաջ կուգան:

Չ. — Գիւղերու մէջ աղկան ծնողք փեսայէն պաշտօն առնուլ, եւ քաղաքներու մէջ ծանրագին օժիտ (ֆէֆէ) պահանջել հարսին ծնողէն՝ արգիլեալ է, միայն պատշաճին եւ կանոնութեան չարիով ներեալ է:

Ի. — Նշանտուութիւնն շատ ժամանակ չ'անցունելով, պսակը կատարելու է, գոնէ նոյն տարուան մէջ:

Լ. — Արգիլուած է տները նշանտուութիւն ընել, այլ քահանայի եւ ծնողաց ու մերձաւորաց միջոցաւ խօսք-կապ լինցնելէն, եւ նշանելոց հաւանութիւնն առնելէն զինի, հարսի եւ փեսայի՝ երկու կողմանց քահանայք եւ ծնողք կամ մերձաւորք կուգան Առաջնորդարան, ուր քննութիւնը եւ վկայութիւնը կատարուելով՝ կ'արձանագրուի ստորագրութեամբ քահանայից եւ եկողաց, եւ ապա Առաջնորդարանը պատրաստեալ արծաթ Խաչ մը կ'օրհնուի նշան՝ և կը տըրուի փեսայի քահանային, որ եւ նա կը յանձնէ հարսի քահանային, որ կը տանի հարսին. այս է բոլոր նշանը: Այս Խաչը առայժմ քաղաքացւոց համար պարտաւորիչ է, բայց եթէ գիւղացիներն ալ ուզեն կը տըրուի: Այսպէս Առաջնորդանիստ քաղաքիս և շրջակայ գիւղօրէից նշանները յ'Առաջնորդարան պիտի գան օրհնուին եւ արձանագրուին, իսկ վիճակիս թեմերը՝ որովհետեւ Աթոռակալներ ունիմք քաղաքներու մէջ, իւրաքանչիւր թեմի քաղաքացիին եւ գիւղացիին պիտի դիմեն իրենց թեմագլուխ քաղաքը, եւ Աթոռակալն իր գտնուած տեղւոյն քահանայքն հրաւիրելով քննէ նշանութիւններն ըստ պայմանի Առաջնորդիս, եւ երբոր օրինաւոր դատեն քահանայք, Աթոռակալն ըստ այնմ տայ հրամանագիրը:

Ահա, սիրելիք, ինչ որ ռուրբ եկեղեցոյ օրէնքն է եւ ձեր շահն ու խաղաղութիւնը ծանուցինք ձեզ: Ձեմ ուզեր ստառնալիք, պատիժ եւ անէծք յիշել, աղոնք կարգեալ են ի զգաստութիւն անաստից եւ անխորատից. գիտէք որ բարեխնամ Տէրութիւնն ալ արտօնութիւն տուած է Առաջնորդաց ամուսնական խնդիրներու մասին դատելու

եւ պատուհասելու օրինազանցները . գիտէ՞ք որ սուրբ Եկեղեցին նոյովք սահմաններ է այնպիսեաց , բայց ես կը փափաքիմ սիրով եւ գոհութեամբ կառավարել զձեզ եւ ոչ դատելով ու պատուհասելով . կը փափաքիմ օրհնութեան եւ խաղաղութեան Առաջնորդ լինիլ ձեզ եւ ոչ նզովելու :

Ի վերջոյ , Աստուածահաճոյ Դաւիթին խօսքով կը կնքեմ գրութիւնս , զոր կը խնդրեմ իբրեւ երանութիւն եւ վայելք ամենեցունցդ համար պարգեւեն երկինք .

« Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո , որդիք քո որպէս ձիթենի շուրջ զսեղանով քով : Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ որ երկնչի ի Տեառնէ » :

Եւ դուք եղիջիք օրհնեալ ի հօրէ Ամենակալէ . Ամէն :

Աղօթարար Առաջնորդ Զեր
ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԻ .

28 սեպտեմբեր 1885
Ս'Առաջնորդարան Հայոց
Ի Տրապիզոն

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԿԷՍ ԴԱՐ ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

Գ .

Եթէ թեթեւ ակնարկ մը ձգենք լրագրական պատմութեան վրայ , պիտի տեսնենք թէ կարեւոր դիրք եւ մեծ հեղինակութիւն ստացած է այն լրագիրն որ աշխատած է յուզել ընկերային խնդիրներ , հասարակութեան միտքն , եւ փոխանակ իւր անունն ստուգաբանական նշանակութեան հետեւելու միայն , հանրային ճշմարտ գաղափարի փաստաբան եւ սխալ գաղափարներու ուղղիչն հանդիսացած է : Հակառակ պարագայի մէջ լրագիրը գոգցես կ'ապրի անյայտութեան մէջ , մահն անտարբերութեամբ կը լսուի եւ մահուամբ կը մուգուի նորա յիշատակն : Բազմաթիւ օրինակներ կան մեր առաջ :

28 տարի առաջ սկսաւ հրատարակուիլ Մեղու Հայաստանի լրագիրն , նախ խմբագրութեամբ Ստեփանոս Եւսեանայ Մանգինեանի , ապա Պետրոս Սիմոնեանի , որ Դորպատի համալսարանի մէջ ընդունած է իւր ուսումն : Մեղու Հայաստանի սկիզբէն ի վեր կրօնական թերթի երեւոյթը կը կրէ . յոյժ պահպանողական է , հակառակորդ ազատական գաղափարներու եւ միշտ հաւատարիմ իւր ուղղութեան : Անտարբերութիւն ներշնչող այսպիսի լրագիրն , անտարակոյս , շատ քիչ համակիրներ կ'ունենայ , եւ արդարեւ Կաւկասիոյ մէջ միայն սակաւաթիւ կուսակցութիւն մը կայ որ կը ջատագովէ Մեղուն : Պէտք է խոստովանիլ թէ լրագրական վարկն քիչ շատ նշանաւոր է Ռուսիոյ Հայոց մէջ . այս տեսութեամբ , որչափ եւ Մեղու Հայաստանի շահած իսկ չլինէր հասարակութեան համակրանքն , այնու ամենայնիւ հանրային գործիչ մը կը համարուէր , հետեւաբար արժանի հանրային վարձատրութեան իւր աշխատութեան փոխարէն : Արդ , երբ 1882 ին պիտի լրանար նորա քսան եւ հինգամեայ գոյութիւնն , Թիֆլիսի եւ Կաւկասիոյ Հայերն սիրով կատարեցին նորա յորեւեանը գրամական եւ բարոյական մեծ օժանդակութիւն մատուցանելով Պ. Սիմոնեանի : Յորեւեանի առթիւ Մ. Սանասարեան ինքնայօժար խոստացաւ այնուհետեւ ամեն տարի 600 ռուբլի տալ Մեղու Հայաստանի :

Մեղուի ծաւալման մեծապէս կը նպաստեն Պ. Սիմոնեանի Օրոսան Կեանքերն որ եզական են մեր լրագրութեան մէջ իրենց սահուն ոճով , խմատալի դարձուածներով եւ նուրբ բայց սուր հարուածներով : Պ. Սիմոնեան իւր Օրոսան Կեանքերը կը գրէ Թիֆլիսի բարբառով եւ ոտանաւոր , բայց արձակ դասաւորութեամբ . անպատրաստի եւ աղբիւրի նման նիւթը կը բղխի նորա մտքէն . շատ անգամ տպարանի մէջ եղած ժամանակ կանգնած տեղն մատիտով մը թուղթի վրայ արագօրէն կը գրէ եւ միւս կողմէ կուտայ գրաշարին շարելու : Պ. Սիմոնեանի քանի մը Օրոսան Կեանքերը թարգմանուած լինելով ռուսերէն , ռուսական լրագիրներն մեծ գովութեամբ խօսեցան Սիմոնեանի « Բէլիէտոնական » տաղանդի վրայ եւ Պետերբուրգի ազատական եւ նշանաւոր

թերթն, Պրիստի, յայտնեց թէ համարեա ամբողջ Ռուսիա չունի Սիմոնեանի պէս ֆելիքսիստ մը :

1885 ի ամբան թիֆլիսի մէջ լուր տա-
րածուած էր թէ Սպանդար Սպանդարեան
(դոկտոր Փիլիսոփայութեան ուսած ի Գեր-
մանիա) 1884 Յունուար 1 էն պիտի հրա-
տարակէ Նոբ - Դոբ անուն լրագիր մը . հա-
տարակութիւնը գոհունակութիւն կ'զգար
Սպանդարեանի այս ձեռնարկէն, որովհետեւ
Մեղուի մէջ կարդացած ինքելով նորա գրած
խմբագրական յօդուածներն՝ համակրելի
գտած էր նորա արտայայտած գաղափար-
ները : Նոբ - Դոբ իւր հրատարակման առա-
ջին օրուան խմբագրականով, հայ ազգի
զարգացման աստիճանը հաւասարեց կա-
տարեւապէս վայրենի ժողովրդոց մտային
կարողութեան հետ . ապացուցեց ցայն
վայր գոյութիւն ունեցող լրագիրներու
ոչնչութիւնն եւ յայտարարեց թէ ինքն
առաջին պիտի կազմէ Հայի առաջդիմու-
թեան եւ կրթութեան դարազուխն : Այս
տղայական յայտարարութիւններն շարժե-
ցին եւ տեղական ուսու լրագիրներու ծի-
ծաղն ու ծաղրը :

Պարագայները կ'ապացուցանեն թէ մա-
նասն Նպատակաւ էր որ 1884 ին սկսաւ
հրատարակուիլ Նոբ - Դոբ : Եթէ գոյութիւն
ունէր այդպիսի նպատակ, ոչ այլ ինչ կրնար
լինիլ նա բայց եթէ կաթողիկոսական խըն-
դիրն :

Իբրեւ ազգի գաւաճաններ եւ խար-
դախներ նկարագրեց Ներսէս Պատրիարքն
եւ Խրիմեան Հայրիկը, նպատակ ունենա-
լով հանրային կարծիքի առաջ արատաւորել
նոցա վարկն, եւ այսպէս անաջողութեան
դատապարտել նոցա ընտրութիւնն ի կա-
թողիկոսութիւն : Սակայն Ռուսիոյ Հայոց
սէրն եւ համակրանքն այնչափ խորին եւ
անհուն էին դէպի յիշեալ երկու անձերն,
որ Ռուսիոյ Հայք իրենց դժգոհութիւնը
բացարձակապէս սկսան յայտնել Նոբ - Դոբի
նկատմամբ : Եւ արդարեւ բազմաթիւ բա-
ժանորդներ լեւ զրկեցին իրենց թերթերն
եւ բաժանորդներու թիւը գրեթէ կիսով
չափ պակսեցաւ : Առանց Նոբ - Դոբի բա-
րեմտութիւնը խնդրոյ տակ ձգելու, կը
հաստատենք միայն թէ յիշեալ թերթի կ'
Պոլսոյ եւ Թուրքիոյ միւս մասերէն ստա-

ցած թղթակցութիւններն յաճախ ճշմար-
տութենէ հեռի են եղած եւ այդպիսի ան-
ճիշդ թղթակցութիւններէ թեւադրեալ խոր-
բագրական յօդուածներն աւելի վնասած
են ազգային շահուց :

Եթէ Նոբ - Դոբի թղթակցութեանց ան-
ճիշդ մասերն այնպիսի իրողութեանց միայն
վերաբերէին, որոց ճշմարտ կամ սխալ լի-
նեն ստուգելու միակ միջոցը ինչքա մաս-
նաւոր քննութիւն մը, ի հարկէ այսպիսի
գրեթէ անկարելի միջոցի մը կիրառութիւնը
պիտի չ'սպասուէր խմբագրութենէն : Կան
սակայն բազմաթիւ ապացոյցներ, որ են-
թադրել կուտան մասնաւոր ատելութիւն
մը կամ կիրք ընդդէմ այս կամ այն ան-
ձանց կամ շահուց : Չենք կարծեր որ Նոբ -
Դոբի խմբագրութիւնը կատարեալ համադ-
մամբ հիւրընկալած լինի, ի մէջ այլոց, իւր
Պոլսոյ թղթակցի վերջին տարեկան տե-
սութեան հետեւեալ հատուածն, որոյ ցնո-
րական բնութիւնն եւ ոչ մի ընթերցողի
ուշադրութենէն կրնայ վրիպիլ :

Յայտնի է թէ Արեւիկ 1885 տարւոյ
դեկտեմբերին յայտարարութիւն մ'ըրած էր
թէ 1886 էն սկսեալ ծնունդի, նշանախօսու-
թեան, ամուսնութեան եւ մահուան ծանու-
ցումներ կ'ընդունի (անտարակոյս դրամով) :
Ի հարկէ այս ո'չ ազգային եւ ո'չ հանրային
վիճելի խնդիր մ'է, այլ լոկ ծանուցման : Եւ
սակայն, այսպիսի բացորոշ դէպք մը ի
հարկին ծիծաղելի մեկնութիւն մը կրցած է
ընդունել :

« Արդար լինելու համար պէտք է խոս-
տովանել որ միայն Յառաջդիմական Միութեան
բերանը եղող լայնածաւալ թերթը
չէր մոռցած իւր տարեկան պարապաբա-
նութեանց առթիւ յիշել եւ լրացնել այս
պէտքը, մասնաւոր առաջնորդող յօդուած
մը նուիրելով հայ լրագրութեան վերայ.....
այսինքն «Արեւելք»ի վերայ, իրեն մինչեւ
եօթանասուն եւ եօթներորդ յարկը բարձ-
րացնելով եւ հռչակելով զնա Ազգին
համար ամենայն ինչ, կեանք, ապագայ,
հաւատք, յոյս, սէր, բարօրութիւն, երկ-
նային յաւիտենական երանութիւն, պատ-
րիարքարան, պատրիարք, վարչութիւն,
Ազգային ժողով, ազգային ապահովագոյն
դրամատուն, պահապան հրեշտակ-ազգա-
յին ամենայն կալուածոց եւ հարստու-

թեան, վերջապէս լիազօր, մեծազօր, ամենակարող զիկապտորութիւն մը, որուն գլխակցութեամբը եւ հաւանութեամբը պէտք է տեղի ունենան աշխարհիս բոլոր մեծ ու փոքր, կարեւոր եւ անկարեւոր, նշանաւոր եւ աննշան, աշխարհային եւ յաւիտենական բոլոր գէպքերն եւ գործողութիւնքն, մինչեւ իսկ ծնողը երբ ուզեն երեխայ մը բերել աշխարհ, պէտք է կանխաւ արտօնութիւն ստանան «Արեւելք»ի տիեզերական վարչութենէն, եթէ ո՛չ չը պիտի տեսնեն իրենց զաւկին խերը. նշանուելու ձեռնարկուող երիտասարդը եւ երիտասարդուհիք պէտք է կանխաւ դիմեն Նորատուկեան խանը եւ Ս. Սինօգէն աստուածային օրհնութիւնը ընդունեն, եթէ ո՛չ ամեն միջոց ձեռք պիտի առնուի որ չ'արժանանան ինելու «երկրքին մի մարմին», ամուսնացողը պէտք է կանխաւ մտնեն Յաւաջգիմականաց պրոպագանդիստ ակադանը եւ այդ սուրբ ուխտին որդեգիր արձանագրուին, եթէ ո՛չ հրապարակաւ եւ ի պաշտօնէ ապօրէն եւ անվաւեր պիտի հրատարակուի եւ նորվիւք բանադրուի իրենց միութիւնը, եւ այնուհետեւ իրենց ամբողջ կեանքն պիտի պաշարուի արդէտաքեր դառնութիւններով. երկարատեւ կամ կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ գերեզմանին սառն եւ տըխրատեսիլ գուռը բաղխող մահկանացուն պէտք է նախ քան իւր վերջին շուրջն աւանդելը՝ Նորատուկեան խանի Ս. Սինօգին յատուկ խոստովանահայրերէն մին կոչել տալով, վերջին հաղորդութիւնը նրա ձեռքէն ընդունի եւ երդնու անդիի աշխարհին մէջ պրօպագանդա ընելու «Արեւելք»ի համար, եթէ ոչ թոյլ չը պիտի տրուի բնաւ որ իւր ոսկերտովք մէկ վայրկեան իսկ հանգիստ առնուն գերեզմանին մէջ եւ խոստութեամբ պիտի յանձնարարուի պատմագրաց որ այնպիսոյն անուընդ Վասակաց, Մեհրութանաց եւ Վեդտ Սարգսաց կարգը դասին ազգային ժամանակակից պատմութեան մէջ»

Այս ջնջին և նորագոյն օրինակն արդէն կրնայ պատկերել մեր առաջ Նոբ-Դաբի լրագրական ինքնաձանաչութեան եւ բարոյական մեծութեան աստիճանը :

Նոբ-Դաբի խմբագիրն ունի առանձին յատկութիւն մը. մարդ մը համոզելու հա-

մար ժամերով կը խօսի անձանձիր մինչեւ որ յաղթանակը տանի : Եւ Թիֆլիսի Հայերը փառք կուտան Աստուծոյ որ չունին Սոփայն Ժողով, որովհետեւ Պ. Սպանդարեան միւս երեսփոխանաց խօսելու միջոց չպիտի շնորհէր :

1876 ին խմբագրութեամբ Պ. Արգար Յովհաննէսեանի սկսաւ հրատարակուիլ Փոքի նախ եռամսեայ եւ յետոյ միամսեայ հանդէսն որ իւր մեծադիր ծաւալով, թուղթի գեղեցկութեամբ եւ հաստատութեամբ, ճոխ եւ բազմակողմանի նիւթերով գրեթէ կրնար մրցիլ ռուսական եւ եւրոպական գլխաւոր ամսաթերթերու հետ. զայս խոստովանած են ռուս եւ գերմանացի գիտնականներ որ քիչ շատ ծանօթ են հայ լեզուին եւ գրականութեան : Փոքին մէջ կը հրատարակուէին Հայոց վերաբերեալ հնագիտական յօդուածներ, հայկական կեանքի վէպեր, Շիլլէրի, Լէսսինգի եւ այլոց նշանաւորագոյն թատերախաղերն եւ ինքն Փորձին կ'աշխատակցէին Ռուսիոյ Հայոց ամենէն երեւելի գրագէտներն, Ալեքսանդր Երիցեան, Ստեփաննոս Պալասեան, Գէորգ Բարխուդարեան, ազգային վիպասան Պերճ Պօռեան եւ Պ. Արգար Յովհաննէսեան, ունենալով մեծ հարստութիւն, բաւական խոշոր վճարներ կ'ընէր իւր բոլոր թղթակիցներուն եւ այս պատճառաւ շուրջ չորս տարուան մէջ աւելի քան 15,000 ռուբլի վնասեց Փոքին համար : Ուստի պարտաւորեցաւ դադարեցնել Փոքին հրատարակումն, և որպէս զի անխախտ պահէ նորա արտօնութիւնն, 1881 ին ձեռնարկեց Արշաթան շաբաթաթերթի հրատարակումն : Կարճ միջոցի մէջ Արշաթան մեծ նշանակութիւն ոտացաւ եւ այսօր Ռուսիոյ Հայոց լրագրոյն թերթը կը համարուի : Արշաթանի այսպէս բարձրանալուն պատճառն այն է, որ նա հանրային խնդրի մը վրայ իւր կարծիքն յայտնելէ առաջ ամենայն խնամով կ'ուսումնասիրէ զայն, եւ միշտ պաշտպան կը հանդիսանայ հանրութեան ճշմարիտ կարծեաց : Այս է պատճառն որ Կաթողիկոսական խնդրի ժամանակ նորա յայտնած կարծիքներն այնքան մեծ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունէին ժողովուրդի առաջ : Արշաթան ընտրելին էր Ներսէսի մահէն յետոյ Խրիմեան Հայրիկ, եւ սորա համար

Վրաստանի եւ Իմերէթի թեմն 1884 ի եւ 1885 ի Համագային Ժողովոց մասնակցելու համար երկու անգամին եւ իւր պատգամաւոր ընտրեց Պ. Աբգար Յովհաննէսեան : Աբգար Գառնիկի Կաւկասիոյ նշանաւորագոյն թերթն համարուելուն գլխաւոր պատճառներէն մին եւս այն է որ նա միշտ կը պարունակէ կարեւոր յօդուածներ Հայոց վերաբերեալ : Աբգար Գառնիկի յոյժ կը հետաքրքրուի Թուրքիոյ եւ մանաւորապէս Կ. Պոլսոյ Հայոց կեանքով, այս պատճառաւ Թուրքիոյ Հայոց լրագրէ տիրաւորն ստացեր է ժողովուրդէն : Ներսէսի մահուան առթիւ, հակառակ Դոնդուկով - Կորսակովի կառավարութեան, սեւ չընանկով հրատարակեցաւ : Դոնդուկով իշխանն իսկոյն հեռագրով յայտնեց ի Պետերբուրգ Աբգար Գառնիկի այս անհնազանդութիւնն եւ պետութիւնն ութամսեայ դադարման ենթարկեց Յովհաննէսեանի թերթն :

Այս միջոցին Մշակ եւս չէր հրատարակուեր, հետեւաբար գոյութիւն չունէին այս երկու թերթերն որ քարոզէին հասարակութեան դրամ հանգանակել ի նպաստ «Ներսէս Վարժապետեան» ուսումնարանի . սա պարէզի վրայ մնացեր էին Մեղու Հայաստանի եւ Նոր - Դար . առաջինն անտարբեր լուծութիւն կը պահէր, երկրորդն սկզբունք ըրած էր իրեն հակառակիլ ամեն բանի որ կը վերաբերէր Ներսէսին եւ նորա յիշատակին : Աբգար Գառնիկի, որ նորէն սկսած է հրատարակուիլ, իւր յունուար 19 ի համարի մէջ դատապարտելով յիշեալ երկու լրագրներու վարմունքն հետեւեալ խօսքերը կը յաւելու .

« Պարոններ, եթէ չէ՛ք կարող չինել մի՛ « քանդէք գոնէ, եթէ ոգեւորելու ընդուն « նախութիւն չ'ունիք, գոնէ մի՛ սառցնէք, « մի՛ մեռցնէք ժողովրդի մէջ մնացած ե- « ռանդը . բարի գործի համար դուք մի « կոպէկ տուողը չ'էք, ոչ մի կաթիլ քրտինք « թափելու չ'էք, լոկ խօսքն ի՞նչ է որ այն « էլ խնայու՛մ էք.....»

Եթէ «Ներսէս Վարժապետեան» ուսումնարանի բացման գաղափարը պաշտօնապէս հրաժարական տուած չլինէր այս աշխարհէն, Աբգար Գառնիկի ձայնն անարձագանք չպիտի մնար եւ Ռուսիոյ Հայք, անտարակոյս, նորա հրաւերի վրայ պիտի շտապէին մեծագումար հանգանակութեան ձեռնարկել :

Թիֆլիսի մէջ տակաւին կը գտնուին մի երկու թերթեր եւս, որոցմէ յիշատակութեան արժանի է Աղբիւր մանկական ամսաթերթն, ոյր նիւթերն առ հասարակ խնամով ընտրուած կը լինին եւ մանկան մտքին դիւրամտչելի . կը հրատարակուի Տիգրան Նազարեանի խմբագրութեամբ, թէեւ մինչեւ վերջին ամիսներն իրապէս խմբագրութեան պաշտօնը կը վարէր Գաբրիէլ Միրզոյեան որ Թիֆլիսի հայ երիտասարդութեան գործունեայ եւ եռանդուն անդամներէն մին կը համարուի : Այս տարուան սկիզբէն պիտի ձեռնարկէր առանձին՝ Նախկին ամսաթերթի մը հրատարակութեան :

Պ. Տ.

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա. ՊՈՒՇԸ

Գ.

(Շար . նախորդ թուէն)

Այդ սրտին, որ կրնար նկատուիլ « դրական սիրտ մը », տիրապետելու փոքր ինչ յոյս կրնար տածել Յօսթիւնէ եթէ սիրոյ պատերազմներու մէջ փորձառու եղած լինէր եւ օժտուած ուղիւղիտական քաջահնար տաղանդով : Բայց Յօսթիւնէ անփորձ էր եւ խակ . թէպէտ շատ ապրած էր, բայց միշտ յուզեալ, յուսալիր, յուսախափ, սրտնեղ, բնաւ ժամանակ չէր ունեցած խորհելու եւ դատելու : Հետեւաբար իւր անցեալը չէր կրնար ծառայել իրր ուղիւղեակ ներկային : Ինքն ալ չէր գիտեր որ սուրբին օգնութեանը դիմել : Ամէն ջանք ի գործ կը դնէր որ սիրուն երեւի եւ հրապուրիչ . կը շեղէր բնականէն, ուստի աւելի անախորժելի կը լինէր : Երբեմն այնքան ծանր կը բռնէր ինքզինքն որ դիտողները կը ծիծաղէին . երբեմն ալ նորածիլ աղջկան մը պէս կը խօսէր, կը խաղար, կը խնդար : Բարեբաղդաբար Սինայեան բնաւ ուշադիր չէր այս հնարքներուն . նա կը շա-

րունակէր միշտ ընտանեւար վարուիլ Ֆոռ-
թիւնէի հետ, իբր տան աղջկան մը :

Ֆոռթիւնէի կենաց այս ճգնաժամին էր
որ Լեւոն նորա դէմն ելաւ : Ի՞նչպէս եղաւ
որ Լեւոնի սիրտը մէկէն ի մէկ յարեցաւ
աղջկան, ի՞նչ յատկութիւններ տեսաւ ա-
նոր վրայ : — Այս հարցումներու պատաս-
խանները կրնան տալ այն երիտասարդներ,
կամ լաւ եւս այն պատանիներն որոնք սի-
րած են այնպիսի աղջիկներ զորս ընկերու-
թիւնն անյարմար, մինչեւ իսկ հրէշաւոր
սեպած է : — Ինչո՞ւ սիրած են : — Վասն
զի սիրած են : Լեւոն ծանօթացաւ Ֆոռ-
թիւնէի ձմրան իրիկուն մը, Սինայեաններու
տունը : Կիրակի օր մ'էր, Լեւոն այցելու-
թեան գնաց Սինայեաններու, բաւական
ատենէ ի վեր չէր գնացած : Մի քանի սեն-
եակներու մէջ ըստ սովորութեան լեցուեր
էին թուղթ խաղացողներն : Ուրիշ սենեակ
մը հաւաքուեր էին խօսող խնդացողները .
Լեւոն անոնց մօտ գնաց : Ամէնքը կը ճանչ-
նար բաց ի մէկէ մը : Օր. Սինայեանն ան-
միջապէս իրարու ծանօթացուց ըսելով .

— Միւսիւ Լեւոն Սարաֆեան, — Օրի-
որդ Ավետ : —

Ձմրան վերջի կիրակիներէն մին էր . սեն-
եակը տաքուկ էր : Վառարանի մէջ կը լըս-
ուէր փայտերու ճարճատիւնը . անոյշ, նըր-
բին, գրեթէ անզգալի բուրումներ հեշ-
տութիւն կուտային զգայարանաց : Նրեկոյ-
եան հեշտ արեւուն ճառագայթները ներս
կ'անցնէին ապակիներէն եւ բեկբեկելով
ճերմակ «Լ»-ներու, կարմիր վարագոյրնե-
րու վրայէն շառագոյն կ'երեւցնէին դէմ-
քերն ու սենեակն : Օրիորդի մը մասները
կ'երթեւեկէին դաշնամուրի մը վրայ, որուն
կ'ընկերանար երիտասարդ մը իւր Վիշնիւն
եւ կը նուագէին Այէ Կօմիէ Բօնի,
գորովալիր սրտերու համար քաղցրահնչակ
նուագն :

Լեւոն նստաւ Ֆոռթիւնէի քով . երբ ե-
րաժշտութիւնը կը վերջանար, կը խօսակ-
ցէին Ֆրանսերէն : Ֆոռթիւնէի երեսները
կարմորակ էին շնորհիւ հրակայլակ շա-
ւօշին եւ Կիւստոյին . ինքն ալ շատ զը-
ւարթ էր նոյն միջոցին : Նրբ աղջիկ մը, կին
մը զուարթ է, միշտ հրապուրիչ յատկու-
թիւն մը ունի, մանաւանդ երբ այտերն
տաքցած են : Ուշ ատեն հիւրերը մեկնե-

ցան, Լեւոն ալ ուղեց երթալ, բայց Օր.
Սինայեան թող չտուաւ, եւ արդէն ինքն
ալ կ'ուղէր մնալ : Ընթրիքի ժամանակ Ֆոռ-
թիւնէի քով նստած էր եւ Մկրտիչ Սինայ-
եանն ալ իրենց դէմն էր : Ֆոռթիւնէ այն
գիշեր շատ սրամիտ էր, շատ ուրախ, հե-
տեւարար նաւ շնորհալի : Այն գիշերն, հե-
տեւեալ օրը, Լեւոն շարունակ Ֆոռթիւնէի
վրայ կը մտածէր, եւ այնուհետեւ աւելի
ստէպ առիթ կը գտնէր Սինայեաններու
տունն երթալու ուր ընդհանրապէս կը հան-
գելուէր Ֆոռթիւնէի :

Շարաթներ անցան, Լեւոն հետզհետէ
աւելի կը կապուէր սրտով Օր. Ավետի
հետ, բայց հետզհետէ ալ աւելի երկիւղա-
լից եւ աւելի կ'արանոտ էր . այլ բոլորո-
վին տկարացաւ երբ օգնութեամբ կաս-
կածանացն ու երկիւղին կարծեց նշմարել
թէ Ֆոռթիւնէի սիրտը նուիրուած էր Մը-
կրտիչ Սինայեանի : Իսկ այս վերջինս կը
սիրէր զնա : Լեւոն չվարանեցաւ այս հարց-
ման ինքնին հաստատական պատասխան
տալ : Թարմ սրտով նորընծայ սիրահար մը
միշտ միամիտ է եւ կը կարծէ թէ իւր սի-
րած աղջիկն օժտուած է ամէն յատկու-
թիւններով, թէ նորա նմանը չկրնար գըտ-
նուիլ և բնաւ չգարմանար որ ամէն ոք զնա
սիրէ եւ պաշտէ : Այս գաղափարն ունէր
Լեւոն Ֆոռթիւնէի համար եւ շատ բնական
կը գտնէր որ Մկրտիչ Սինայեան խենդե-
նայ այդ աղջկան վրայ : Բայց ընկերական
պահանջմունքներն . — Է՛հ, առանց զիմե-
լու անգլիական թագաւորներու պատմու-
թեանց զորս լաւ ուսած էր Ռուպերթ դըպ-
րոցի մէջ, ո՞չ ապաքէն լսած էր թէ Պալիս
շատ բարձր դիրք ունեցող շայեր, ոյք կը
պատկանին հին եւ աղնուական տոհմերու,
իրենց կիներն ընտրած են խոնարհ վիճա-
կի պատկանող ընտանիքներէ, կնոջ մը հա-
մար աղնուականութեան ամենափառաւոր
տիտղոսն համարելով նորա գեղեցկութիւնը :
Սակայն Մկրտիչի ծնողքն ի հարկէ կը փա-
փաքէին որ իրենց զաւակը բարձրաստիճան
ընտանիքէ աղջիկ աւնու, եւ այդ պատ-
ճառաւ էր անշուշտ որ Լեւոն գաղտնի կը
պահէր իւր սէրը մինչեւ յարմար առիթ մը
ներկայանալն : Այսպիսի միամիտ մտածու-
թիւններէ առաջնորդեալ Լեւոն կատարե-
լապէս համոզուած էր Ֆոռթիւնէի և Մկրտ-

տիչի փոխադարձ սիրոյն : Երբ ունեցաւ այդ համոզումն, այն ատեն սէրն ու երախտապարտութիւն սկսան մենամարտիլ իւր սրտին մէջ :

Յայտնի է թէ աղնիւ եւ բարի ծնած սրտերը չեն կարող երբեք ապերախտ դռնուիլ : Լեւոն զոհեց սէրն իւր պարտականութեանց, կամ լաւ եւս զոհել կարծեց : Սրտի ամէն աղնիւ բարախում, խոհական ամէն խորհուրդ կը ջախջախին ընդդէմ այն նուրբ, թեթեւ զգացման որ սէր կը կոչուի : Լեւոն կրնար իւր սիրտն զոհել որովհետեւ, Ֆոթիւնէ կրնար նշանուիլ և ամէն յոյս կորսուիլ Լեւոնի համար, բայց Լեւոն կը կարօտէր շնչել այն օդը զոր Ֆոթիւնէ կը շնչէր, տեսնել նորա դէմքը, լսել նորա ձայնը : — Հմայեալ էր եւ մագնիսացեալ :

Սրտին խոր ծալքերուն մէջ կ'ուզէր թաղել Լեւոն իւր սէրը, բայց սէրը, նման կայծուիկին, կը պլպլայ որքան ալ նսեմաստուեր լինի սիրահարին դէմքը : Ֆոթիւնէ զգաց թէ Լեւոն զինքը կը սիրէր : Այդ աղջիկն որոյ համար ոչ մի սիրտ բարախած էր մինչեւ այն ատեն, գոհ մնա՞ց արդեօք, գգուեցա՞ւ իւր անձնասիրութիւնը, ունեցա՞ւ սիրտը գորովալիր տրոփում մը մտածելով թէ ինքն որ անկող մնացած էր սիրոյ խնջոյքին՝ կրնար այնուհետեւ հանդիստ մեռնիլ. ո՞չ ապաքէն աղջկան մը համար մեծ վիշտ է հասնիլ ծերութեան եւ ակնարկ մը տալով անցեալին չնմարել անդ այն լուսոյ շաւիղը զոր կը թողու սիրով տոգորուած սիրտ մը : — Ո՛չ :

Ամուսնացած կնոջ մը համար միշտ անուշաբոյր է այն խուսկը զոր կը ծխեն իւր առաջ, զուարթահայեաց ակնարկ մը ունի նա անոնց համար ոյք զմայլած կը դիտեն զինքը : Ամուսնացած կին մը՝ որ աւելի փափկասիրտ է քան աղջիկ մը՝ միշտ դիւրագորով է զինքը սիրողին համար, մանաւանդ երբ այդ սէրն ի յայտ կուգայ չըրջապատեալ մեծարանաց արտաքին ամէն նըշաններով : Բայց ամուրի աղջիկներն որ աւելի հաշուել գիտեն քան զգալ, կ'ատեն զանոնք որ իրենց անպատեհ սիրովը կը խանգարեն նոցա հաշիւներն : Ինչ անտանելի կացութիւն աղջկան մը համար երբ իւր չորս կողմը կը դեգերի, դէմքը տխրամած լամարթին-

եան մեղամաղձութեամբ, ինքնակոչ սիրահար մը զոր ինքը ոչ կը սիրէ եւ ոչ ալ կուգէ սիրել, եւ այդ սէրը սպառնալից վտանգ մ'է միշտ իւր ամէն խորհրդոցը : Խեղճ Ֆոթիւնէ, իբր այն թէ բաւական չէին իւր այնքան դժբաղդութիւններն եւ ահա՛ իւր գլխոյն վրայ կը տնկուէր սիրահար մը ճիշդ այն պահուն յորում ոչ միայն պէտք չունէր նմա այլ եւ խոչ եւ խուրթ մը կը լինէր իւր ամէն խորհրդոցն : Հաղիւ թէ առիթ մը կը ներկայանար իրեն միայնակ մնալու Մկըրտիչի հետ եւ ահա՛ Լեւոն կ'երեւէր, սենեակը լինէին թէ պարտեղին մէջ, գլուխը բաց, գլխարկը ձեռքը, կտորտուելով եւ իւր մեծարանքները մատուցանելով կ'ըսէր .

— Արդեւք չեմ ըլլա՞ր :

— Ձէ՛, չէ՛, Լեւոնիկ, կը պատասխանէր Սինայեան եւ կը հրաւիրէր զնա իրենց մօտ :

Կը նստէին սեղան, Լեւոն միշտ Ֆոթիւնէի մօտն էր եւ թոյլ չէր տար Մկըրտիչի փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու Ֆոթիւնէի, որոյ փոխարէն նա կրնար գետեղել «միտք բանի ունեցող» շնորհակալութիւն մը : — Կը ներկայանա՞ր առիթ մը պարելու, միշտ Լեւոն կը յառաջանար նա գեղածէմ եւ իւր բազուկը կ'ընծայէր Ֆոթիւնէի, ո՛չ Մկրտիչի ո՛չ այլոց ժամանակ թողլով : — Լեւոն միշտ կը դեգերէր Ֆոթիւնէի չորս կողմն ուշադիր հաճոյակատար լինելու նորա ամէնափոքր կամայն :

— Մտեղ մ'է այդ տղան, կ'ըսէր Ֆոթիւնէ, զիս հանդիստ չսլիտի ձգէ :

Եւ օր մը այդ աղջկան բոլոր տխուր նախազգացումներն իրականութիւն կը լինէին : Մկրտիչ իւր բրոջն ըսած էր .

— Կը տեսնե՞ս ինչպէս Լեւոն Ֆոթիւնէի չորս կողմը կը պտըտի . աղէկ չըլլա՞ր որ երկուքն իրարու կարգենք : Երկուքն ալ ուսումնական են, ուսումնականներն իրարու կը վայեն :

Այդ առաջարկը կը համապատասխանէր Օր. Սինայեանի գաղտնի մտածութեանց, եւ զգաց այն ուրախութիւնը զոր կ'զգան միշտ աղջիկներն երբ կ'ուզեն նշանել իրենց բարեկամուհիներն — բնականաբար երբ ընտրելուհի իրենք չեն : Յաջորդ օրը Ֆոթիւնէի լուր կը ղրկէր Օր. Սինայեան եւ առանց մանուածապատ դարձուածքնե-

րու կ'առաջարկէր նմա ամուսնանալ Լեւոնի հետ, աւելցնելով թէ այդ դադարիւրն եղբորմէն կուգար եւ թէ նա ալ կնքահայր պիտի լինէր:

Ֆոթիւնէի արիւնը երեսը ցատկեց, կարմրեցաւ. քիչ մնաց պիտի ըսէր թէ «Դուն առ Լեւոնը եթէ այդքան կը սիրէք» . բայց գրեթէ բնազդմամբ զսպեց ինքզինքը. չէր ուզեր խզել յարաբերութիւնները Սինայեաններու հետ:

— Ի՞նչ կ'ըսես, պատասխանեց բռնի ծիծաղով մը, ես միտքս դրած եմ չկարգը ունի. այսպէս շատ հանգիստ եմ: — Օր. Սինայեանի բոլոր առարկութիւնները փրկեցան ընդդէմ Ֆոթիւնէի յամառութեան:

Ֆոթիւնէ մեկնեցաւ Սինայեանի տունէն սաստիկ դիսու ցաւով մը. մի քանի օրեր անցուց առանց երեւնալու. անհուն ատելութիւն մը կը սնուցանէր սրտին մէջ թէ՛ Մկրտիչի եւ թէ՛ Լեւոնի համար: Այդ առաջարկէն մի քանի շաբաթ յետոյ, ամբողջ վերջերը լուր տարածուեցաւ թէ՛ Մըկըրտիչ Սինայեան կը նշանուի Օր. Հերիգայի հետ: Երբ Ֆոթիւնէ տեղեկացաւ այդ լուրոյն, ո՛չ բարկութիւն ունեցաւ, ո՛չ կատաղութիւն զգաց: Նման էր հօր մը որ յանկարծ մեռած կը տեսնէ իւր միակ զաւաակը: Լքեալ, յուսահատ էր: Ամէն ինչ կորսուած էր իրեն համար:

Իսկ Լեւոն ունեցաւ այն ուրախութիւններէն մին զոր քիչ անգամ տրուած է մարդուս վայելել իւր կենաց մէջ: Սէր ու գըթութիւն ի մի կը ձուլուէին իւր սրտին մէջ: Լեւոն ենթադրեց Ֆոթիւնէն զոհ մը Սինայեաններու ընտանեկան նկատմանց: Կը փութար իւր սէրն յայտնել առ Ֆոթիւնէ. մի քանի նամակներ դրեց Փրանսերէն. ամէնն ալ պատուեց, ո՛չ մին կը բացատրէր իւր զգացմանց սաստկութիւնն: Որոշեց երեք բառ գրել միայն — երեք բառ, թէպէտ կարճ բայց շատ պերճաբան, ինչպէս այն ամէն բացատրութիւններն որք կենաց հզօր զգացումները կ'արտայայտեն. միշտ հին են, բայց միշտ նոր: — «Ձեռք էք սիրելի» գրեց Փրանսերէն — եւ այն օրն երբ կը վերադառնային պաշտօնական նշանաւորութենէ ու Սինայեան եւ բոլոր բարեկամներն որք հաւաքուած էին տունը, Լեւոն վայրկեան մը գտաւ եւ աղաջաւոր աչքերով

սահեցուց թուղթը Ֆոթիւնէի ափին մէջ: Ֆոթիւնէ ճաթկեց թուղթն, ուզեց նետել առանց կարդալու, բայց վերջապէս կին էր, չը դիմացաւ դնաց անկիւն մը կարդաց, թուղթը գրպանը դրաւ. նողկանք կ'զգար: Իւր յոյսերու մահուան դադաղին վրայ Լեւոն կը ժպտէր. իւր թշուառութիւնը նորա ուրախութիւնն էր:

Բայց երբ վերադարձաւ տուն, փակուեցաւ իւր սենեակին մէջ եւ սկսաւ մտածել: Փոքրիկ սեղանի մը վրայ ճրագը կը վառէր, աթոռ մը առաւ եւ ճակատն, որ կ'այրէր, ձեռքերուն մէջ առած կը մտածէր: Ա՛լ կարող չէր տոկալու. ա՛լ կարող չէր վերստին աշխատանաց ձեռնարկել յետ այնքան յուսախաբութեանց: Զգրեք թուղթած էին, մինչեւ ցարդ զօրավիզ մը ունէր. իւր ընկերուհիներէն երկուքն Օր. Սինայեան եւ Օր. Հերիգայ բաղդակից էին իրեն. կը սիրէր կարծել թէ միասին տարաբաղդ էին. բայց Հերիգա փառաւոր բաղդ մը կ'ունենար եւ Օր. Սինայեան պիտի նշանուէր քիչ ժամանակի մէջ. ինք միայնակ կը մնար: Ինք միայն զթութեան, ցաւակցութեան եւ ծաղու առարկայ պիտի լինէր: Գնաց բացաւ պատուհանը, մի քիչ մաքուր օդ շնչեց. երկինքն աստղազարդ էր. օդը ջերմիկ, անոյշ հով մը կը փչէր, սիրտը ելաւ, խանդաղատեցաւ եւ սկսաւ լալ: Սիրտը փոքր ինչ զովայաւ: Արցունքները երեսին վրայ էին. գնաց թաշկինակ մը առաւ, եւ սրբեց երեսն. նայեցաւ հայրին, փոխին ուրով չպարած էր երեսները սրբուեցան. տեսաւ իւր դէմքը եւ վախցաւ. կանանչ ու գեղին դոյն ունէր:

Իբր գէշ երազ մը ուզած էր մտքէն միշտ հեռացնել, բայց այդ պահուն կը յիշէր թէ այլ եւս իւր երեսներն ո՛չ թարմ էին, ո՛չ փափուկ: Երկար ատենէ ի վեր սկսած էր ճաթաւել երեսին մօրթը, փոթ փոթ եղած էր: Երկար ատենէ ի վեր բաց չէր պահեր ճակատն, ուր խորշոմները կ'երևէին. իբր թէ մազերը ճակտին վրայ բերելով կը չտկէր զայնա — «Նիւն, Նիւն, Նիւն», «Նիւն», «Նիւն», բայց այդ պզտանաց ներքեւ կը ծածկէր ճակտին հորիզոնական գծերն պառաւութեան այդ նշաններն: Եւ այդ նշաններէն ոչ մին կ'երեւէին Լեւոնի աչքին. անշուշտ տխմար մ'էր. Ֆոթիւնէ սիրոյ

վրայ գաղափար չունէր, հետեւաբար չէր կարող դատել Լեւոնը :

Եւ ի՞նչ ընէր՝ մեռնի՞լ չէ... Ի՞նչ կրնար ընել : Սկսած էր զով ընել, պատուհանը գոցեց, եւ անկարող մտածելու եւ խորհելու, ինկաւ անկողնոյն վրայ . Զախ-ջախուած էր, կամաց կամաց միտիւնց . Կէս դիւերն անցած էր երբ արթնցաւ . բաւական մտած էր, անկողնին մտաւ, փաթթուեցաւ վերմակին մէջ եւ խոր կերպով նիրհեց : Առաւօտուն ուշ արթնցաւ, յագնած էր : Օղբ գեղեցիկ էր, ինքն ալ քիչ մը կազդուրեցաւ, փոքր ինչ մտածեց եւ որոշեց հաճութիւն սալ Լեւոնի ձեռքն ընդունելու : Սկսաւ թուել ինքնին այն առաւելութիւնները զոր այդ ամուսնութեամբ ի ձեռս պիտի բերէր : Ինչ որ ալ լինէր իւր վիճակն, ազատ պիտի լինէր . աղքիկ մը ամուսնութեամբ ազատ կը լինի : Առանց ուրախութեան, առանց գոհութեան այդ որոշումը տուաւ եւ Լեւոնի հաղորդեց Սինայեաններու տունը : Օր. Սինայեան եւ Մկրտիչ գոհ եղան : Լեւոնի ծնողքը շատ դոհ չէին . նորա կը փափաքէին որ Լեւոն «ունենոր» աղջկան մը հետ ամուսնանայ, բայց Աբրահամ աղան, որ միշտ տան բարեկամն էր եւ կողմնակից նորա ուսկից շահ մը կար, կը յիշեցնէր թէ՛

— Փարսն կ'երթայ, քիթը կը մնայ :

Սահակ աղայ եւ կինը այնքան պարտականութիւններ ունէին իրենց զաւկին որ շատ չբխմադրեցին, մանաւանդ վստահ էին նորա խոհականութեանը : Լեւոնի ընդրը ոչինչ կը մտածէր : Եղբայրը պիտի կարգուէր, այդ կը բաւէր իրեն, եւ արդէն ի բոլոր սրտէ կը սիրէր իւր հարսը :

Եթէ կար գոհութիւն մը, այդ Պօթիւնէի մայրն էր, լուացարար Շողակաթը : — Ի՞նչ եղան իւր մայրենի երազները : Միտքը զբաւած էր թէ հանում պիտի լինի, հարուստ փեսայ մը պիտի ունենայ, անոնց տան մէջ առաջին տեղը պիտի գրաւէ իւր զոքանչ, մեծ հանրմանքու հետ հաւասարակից պիտի լինի : Եւ շատ անգամ այս իղձերն էր կանն ալ կ'ըսէր, իսկ կօշկակար Աւետիսը գլուխն երերցնելով կը պատասխանէր . «Էջն է գրեթէ մօտը պարկով գարի, իրկուն կ'ըլլայ ո՛չ պարկ կար, ո՛չ գարի : »

Այո՛, իրենց ալ իրիկունը կը մօտենար,

ո՛չ հարուստ փեսայ կար, ո՛չ հանրմութեան տիտղոս : — Բայց ամէն թշուառութեան մէջ մխիթարութիւն մը գտնելու պէտք կայ . Շողակաթ տուտուն կը մխիթարուէր որ եթէ հարուստ փեսայ չպիտի ունենայ, գէթ եւրօպական գլխարկով փեսայ մը ունի : Բաւական փոխարինութիւն կը համարէր զայս :

Իսկ կօշկակարն երբ առաջին անգամ տեսաւ փեսացուն, մեղքեցաւ տղան . — Կարծես թէ Աստուծոյ շնորհքը վրան է, կ'ըսէր :

Լեւոն ինքն հոգաց Պօթիւնէի օժիտըն, հարսանիքը փութացուց : Խաչին Սինայեան ամուսնացաւ : Ս. Յակոբին սրոշուեցաւ Լեւոնի հարսանիքն : Իրենց աստիճանին համեմատ բաւական լաւ հանդէս մը պիտի կատարուէր : Հարսանիքէն քանի մը օր առաջ Լեւոն ցաւ մը ունեցաւ : Երբ կարգադրութիւններ կ'ընէին, Լեւոն փափաքեցաւ որ Պօթիւնէի հայրն ու մայրը ներկայ գտնուին հարսանիքին :

— Այդ պակաս էր, ըսաւ Պօթիւնէ, — եւ ամենեւին թող չտուաւ որ ծնողքն հարսանեաց գան : Լեւոն վշտացաւ, բայց Պօթիւնէ իրեն նախատինք կը համարէր որ իւր ծնողքը շնորհքով մարդկան մէջ երեւին : Պօթիւնէի խօսքը կատարուեցաւ :

Ս. Յակոբի կիրակի առաւօտը տխուր օր մ'էր . երկինքն ամպամած, ցերեկուան դէմ բարակ անձրեւ մը սկսաւ : Կէս օրէն վերջ երեք կառքեր եկան . հարսնառները ելան Պօթիւնէի սենեակը : Կէս ժամ վերջ մեկնեցան Պօթիւնէի հետ միասին : Մեկնելու պահուն Պօթիւնէ առաջին անգամ ըլլալով, յորմէհետէ յիշողութիւնը կը ներէր, համբուրեց հօրն ու մօրը ձեռքերը :

— Աստուած աղէ՛կ ընէ, միմեաց կօշկակարը :

Մտան կառքերը, կառավարները ձիերը մտրակեցին եւ մեկնեցան :

Կառքին մէջ Պօթիւնէ թաշկինակն հանեց եւ աչքերուն տարաւ : Այսպէս հարս լինիլ կ'երեւակայէր ինքն : Տխուր էր, շատ տխուր . բնութեան տխրութիւնը կ'աւելցնէր իւր թախիծը : Փողոցները տղմուս էին, երկինքը աղտոտ էր, շառաչուկ անձրեւը կ'իջնէր եւ կառքի ապակիներու վրայ գոյորչակները կարծես կը պատկերացնէին իւր երազոց դուրսընդունին :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
(Շարունակելի)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՆԻՓԱՐԱԿՈՒԱՅԻ ԵՐԿՐԱՇԱՐՔԻՆ

1885 ՀՈԿՏԵՄԲԵՐ 11 ԻՆ

Երկու տարի առաջ, այն պահուն ուր Բանամայի գործին թշնամի քանի մը երկրա-
չափներ կը ջանային, Ատլանտեանի միւս
կողմը, վերստին արծարծել Նիգարակուայի
մէջէն ջրանցք մը բանալու գաղափարն որ
այնչափ անգամ երեսի վրայ թողուած էր,
բնութիւնն յանկարծ, իւր մէկ ամենէն
սոսկալի երեւոյթով, կուգար ցոյց տալ ա-
մենուն նմանօրինակ ծրագրի մը դործնա-
կան անկարելիութիւնը. կ'ուզենք ըսել 1884ի
գարնան երկրաշարժը:

Նոյն երեւոյթը կրկնուեցաւ վերջերս,
եւ այս անգամ իւր հետեւանքները սոս-
կալի եղան: 1885 հոկտեմբեր 11ին, երե-
կոյեան ժամ 9 1/2ին է որ գգացուեցան ա-
ռաջին ցնցումները, ծայրագոյն ուժգնու-
թեամբ. « Լէոն եւ Չինանտէկա քաղաք-
ները, կ'ըսէ տեղական լրագիր մը, փլատա-
կաց կոյտի մը վերածուած են: Ի Մանա-
կուա, ահագնադողորդ աղմուկներ լսուե-
ցան յանկարծ, այնպէս որպէս կը ծանու-
ցանէ Ս. Գիլքըն, վերջին դատաստանի ա-
ւուր համար. թուէր թէ երկիրն ողջոյն
պիտի բացուէր եւ քար քարի վրայ չպիտի
մնար: » Եւ, կործանող տանեաց, փչող
պատերուն եւ ընդհանուր քանդման ահ-
ուելի ժխորին մէջտեղ, աղաղակներ կը
բարձրանային, փտի եւ անձկութեան ա-
ղաղակներ խռովուն ժողովրդեան, որ հեղ-
ձուկ մթնոլորտի մը մէջ կ'որսուած, չէր գի-
տեր ո՛ւր ապաւէն փնտուել: Երկրաշարժը
տեւեց կէս վայրկեան. գիշերն ողջոյն եւ
յաջորդ օրը շարունակեց հողին սարսուռ-
մըն, որ վախցնել կուտար նորանոր աղէտ-
ներ. ուստի ոչ ոք համարձակեցաւ տուն
դառնալ եւ բնակիչները վրաններ հաստա-
տեցին պատսպարուելու համար այդ եղա-
նակին հեղեղանման անձրեւներէն. շատեր
փողոցներուն մէջ հաստատեցին իրենց բնա-
կութիւնը:

Մեռելոց եւ վիրաւորաց թիւը սակայն
չնչին է. ասոր պատճառն է անշուշտ տանց
չինութեան եղանակն, որը, մեծ մասամբ,
յարդախառն չազախով կառուցուած են եւ
միակ յարկ մ'ունին: Այդ խեղճ երկրին
քանի մը կարեւոր շէնքերն աւերակ են.
Լէոնի կաթուղիէն, Հանրապետութեան
միակ ճարտարպետական յիշակերտը, յամե-
նուստ կը ներկայէ լայն ծերպեր որք կրնան
պատերուն կատարեալ անկման պատճառ
լինիլ: Ամեն եկեղեցիները վնասուած են
նմանապէս. Նիւթական վիսաններն ահա-
գին են:

Որպէս միշտ, հոկտեմբեր 11ի երկրա-
շարժն զգացուած է մեծ լիճերուն եւ խա-
ղաղական Ովկիանոսի միջեւ գտնուած սլա-
րանոցի մասին վրայ. սակայն տարածուած
է, տակաւ նուազելով, մինչեւ Լէպէրդատի եւ
Ճուիկալքայի հանքերն, Անտեանց կրանի-
դեան չղթային մէջ: Ամենէն ուժգին ցն-
ցումն զգացուած է Լէոնի եւ Չինանտէ-
կայի շրջակայքը:

Որպէս կը պատահի յաճախ, երկրաշար-
ժըն իւր հակահարուածն ունեցաւ ծովուն
ջուրը վրայ. նաւապետ մը, ծովափէն 20
միւրն հեռի, կը պատմէ թէ լիովին զգացած
է ցնցումն: Ուրիշներ կը պնդեն թէ հրա-
բխային ընդծովեայ ժայթքում տեղի ունե-
ցած է. խնդիրը կ'արժէ որ ըննուի, գէթ
այդ կողմանց նաւարկութեան գործնական
տեսակէտով միայն:

Այդ երկիրն ողջոյն հրաբխային է.
տասներկուքի չափ հրաբուխներ կան անդ.
մի քանին միշտ ժայթքման մէջ են, եւ այս
վերջիններէն, ամենէն նշանաւորներն են,
Արանատայի լճին մէջ, Օմէդէբէ, 1780 մե-
դրը բարձր, որ 1883ի ապրիլին լավայի
հեղեղներ ժայթքեց. Մանակուայի լճին
մէջ՝ Մոմոդոմալո (2000 մեդր) ոյր դեղնա-
շորթ եւ ապալերկ գագաթէն կապուտակ
մուս մը կ'ելնէ յաւէտ. աւելի հեռուն Ա-
զոզոսգա, Լաս Բիլաս, Օրոդա, Թէլիդա,
Սանդա-Գլարա, Վիէյո (2100 մեդր), ոյց
ամենքն ջերմուկներ կամ քղմուտ խառնա-
րաններ ունին: Մի քանին բոլորովին չիջած
են, ինչպէս Մազայա, որ 1858 էն ի վեր
կենդանութեան նշան տուած չէ. անցեալ
դարուն, ահաւելի ժայթքում մ'ունեցաւ,
եւ իւր լավաները ծածկեցին լայնածաւալ

դաշտ մը, ուր, հարիւր տարի ետքն իսկ, արեւադարձի զօրեղ բուսաւորումը տակաւին չէ կրցած իւր նախկին իրաւունքները ձեռք բերել: Ոչինչ աւելի մահահամբոյր քան այդ թխալայորդ պատանքն, որուն վրայ տեղ տեղ կը ցոլան շիկորակ նշոյլներ. եղերաց վրայ, աստ անդ ծակերու մէջ բուսած են ոսին ծառատունկեր, իբր թէ ընկճուած՝ այնքան տարիէ ի վեր իրենց վրայ ծանրացող բեռան տակ. ալ եւ ձախ կորէ, դալարիբ կը չըջալատեն զայն. հեռուն, դէսլ ի հիւսիս, Մանակուայի լիճը, մռնչելով ալիգետն հովին տակ որ կը կոծէ գինքն, կարծես կուգայ ընդ առաջ այդ վիթխարի օժանդակին ոյր կոհակները քարացած են իրենց ընթացքին մէջ. հարաւային կողմը կ'ամբառնայ, սպառնալից, ահուելի հրէշն, միշտ բերանաբաց. ինքն եւ կարծես դատապարտուած է անշարժութեան. ալ կրնայ դալ օր մը յորում թոթուելով իւր վիմեղէն քունն, գամ մի եւս պիտ' արձակէ իւր ահեղադողորդ մռնչիւնն, եւ պիտի վերակօի ժայթքել իւր սոսկալի փրփուրը:

Երկրին մէջ կը գտնուին նաեւ քանի մը ժայթքող հրաբուխներ. ամենէն նշանաւորներն են, Մանակուայի մօտ, Թիսդարա եւ Աղդոսգա. ամեն տարի, անձրեւային եղանակին վերջը, շարժումներ յառաջ կուգան խաղաղիկ ջուրց վրայ եւ ասիք սէլֆօքսի անտանելի հոտ մը կը տարածուի չորս գին. անդ եւս հրաբխային դործունէութիւնը չիջած չէ տակաւին:

Այդ բազմաթիւ հրաբխոց արտադրութիւնները երկրին մէջ գէզագէզ կուտակուած են դարուց ընթացքին մէջ. Ամենուրեք կը տեսնուին մօխրակոյտեր, աղմուտներ, եւ քարի ահագին կտորներ, աստ անդ ցանուցիր:

Հրաբխային գործունէութիւնն, ի դարուց հետէ սկսեալ, տակաւին կը շարունակէ երկրաշարժք անոր ընկերացող երեւոյթներն են, եւ հոզը միշտ փափոխութեանց ենթարկուած է. Հոկտեմբեր 11 ի երկրաշարժէն առաջ ո եւ է ժայթքում մը տեսնուած չէ. սակայն, ժամանակէ մ' ի վեր Սանդա Գլարա եւ Թէլիգա հրաբուխները ներքին յուզման յայտնի նշաններ կուտան. խոբ աղմուկներ կը լսուէին եւ չըջա-

կայից բնակիչք կ'սկսէին անհանգիստ լինիլ. — Հողին շարժումները միշտ յանկարծական չեն. տեղ տեղ երկրին մակերեւոյթն անգգալարար կը փոխուի. աստ բլուրներ կը բարձրանան, անդ հովիտներ կը փորուին. աստ գետակներ կը չորնան եւ այլուր ջերմուկներ կը բղխին:

Այսպէս, անդու անդադար, Նիգարա-կուա ենթարկուած է յեղափոխութեանց որք շարունակաբար կը փոխեն իւր մակերեւոյթն: Ամերիկացիք քաջ գիտեն զայս, եւ անցեալ տարի Նիգարակուայի մէջէն ջրանցք մը բանալու համար զրկուած յանձնախումբն արդէն յուսահատած է: Արդարեւ, ջրանցքի մը աշխատութիւնը ո՞րքան ապահով կրնան լինիլ այդ շարժուն հողուն վրայ ուր ի մի վայրկեան կրնայ կորնչիլ տարիներու աշխատութեանց եւ միլիոններու արդիւնքն: Մարդ երբ աւագի վրայ կը կառուցանէ, գիտենք թէ ինչ վտանգներու կ'ենթարկուի:

ՀԱՍՏԱՔԱՂ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Ձեռք իմն յուղիս ձեռն սարսաբեր
Ի թուի երկնից թռիչ անկաներ.
Ծառքն 'ի դրասանգ սպիտածաղիկ
Ակնահաճոյ իսկ առ մարդիկ.
Ոչ հողմ խռում շրջէր յօդոց,
Լըռիկ ծածկեր գգաղաքն յօթոց:

Մերձ առ պատնէշ տախտակաշէն,
Տանց փրլատակա ուր նորոգեն,
Կայր միջաբեկ մուրացիկ ոք.
Անցնորդք բազում ճեպեալ անհոգ:

Բայց եղկելի այրն այն եր յոյժ,
Յուցեալ ընդ տես ըզբնոյթ վաճոյժ.
Եւ խճալից հերաց գալար
Մած յերանունս վերջք գորշադոյն.
Թանձրամորթ յայտար 'ի խոր պալար.
Երևեալ նօթի, մարմին տըմշին,
Ձոր մեկնէին շրթունք կապոյտ,
Եւ դառնահոտ շունչ սուրբաւո.
Թըշաւառական առքն տիպար
Ոսկերուսոյ խաբխուր ինչ կոյտ:

Աչկունքն անշարժ 'ի լուրթ հարեալ,
Յընորական իմն եւ տարտամ, —
Անշուշտ էր կոյր, աղու դարձեալ,
Եւ արտասուեաց շիթք յարածամ
Ի խորշումս իւր սառուցեալ կան,
Յաւած դիմաց փայլ անկենդան:

Խորհչոտ 'ի ձայն տաղանալուր
Ձողորմութիւն կարդայր յագուռ.
Եւ ձեռք նորա էին կարմիր,
Ձիւք 'ի նոսա իբրեւ փետուր
Շուրջ ուռուցիկք. — այլ առաւիր:

Շունք ըզնովաւ կողկանձէին
Յետեալ զոտունս մերկք 'ի գետին.
Ինքն ըզմատանց իւր խածատէր,
Յասնոյր նօթի, ծրծեալ զարիւն:
Եւ ժողովէր 'ի դուռն յորդ ձիւն,
Ընդ ջընցոտիս հերձեալ քամէր.
Ընդ հուպ ահա ընդձէր համբուն
Ըզսառնածոյլ անձըն ծերոյն:

Ոչինչ յուսայր, այլ ցանգ հայցեր,
Յիւր տես զանցնորդն արկեալ 'ի խիրտ.
Ո՛հ մարդկութեան ինքնասեր սիրտ
Ոչ նըկատել 'ի հէք կամէր:

Արդ քահանայ մ'էանց անդուստ,
Յեկեղեցւոյն հասեալ գաւիթ.
Ըզձերն ետես խոժոռամիտ,
Այլ ժողովուրդ էր անդ հարուստ:

Խառնեալ զքրտակ ըզդոյշ ընտրէր.
Ետ յաղքատին գրչխանոց դրամ, —
Ո՛վ նենդութեան բազմախընամ,
Դա պապադրոշմ՝ բերէր պատկեր:...

Ժլպտեալ դիմեաց երէցըն պիղծ
Մըխիթարեւ զօրհասական:
Ըզձերունւոյն ձեռս 'ի վարան
Ինձ եղեւ ջերմ համբուրել իղձ,
Յանհաւատ միտս ածեալ ըզբան.
Գուցէ զաղքատն յըղեաց Աստուած
Փորձել ըզսիրտն անցնորդաց:

ՎԱՀՐԱՄ ՍԸՎԱՃԵԱՆ
Վիեննա, 1886 Յունուար

Ի Մ Ա Ն

ԴՍՏԵՐՆ ՎԵՇՏԱՍԱՆԱՄԵԱՅ

Ահա հընչէ լեզու մեապ լալական,
Ո՛հ աւաղ կոյս թռեաւ 'ի կեանս անմահական,
Երկնահանդէս մուտ յառաքատ,
Հրճուել դասութիւն վեհիմաստ:

Լացեք լացեք ըզմահ հիքին տարածամ,
Բոյլք արտասուեաց ձօնեցէք ձօն անթառամ:

Լաց լաց եւ դու մատունդ 'ի քնար
Եւտերպէ զկոյսն ողբերգաբար:

Հա՛ն քաղցրալուր ըզքընարիդ քո քաղցրաւաչ,
Կոծէ ընդ իս ողորմողորմ լալահառաչ:

Կոծեն եւ ծնողք իւր արժանի
Չվաղաթարշամ կոյս գեղանի:

Ո՛ կոյս, ա՛յսպէս լըքեալ զաշխարհդ ամայի...
Յոյս եւ կեանք քու՛մ սիրելւոյ միակ սրտի.
Չի՛նչ քեզ մեղաւ հէք պատանին...
Առոյգամիտ քո տարփայլին...

Ե՛րթ բարեաւ օ՛ն, բարեաւ ե՛րթ կոյս, քեզ տանի
Ողբանըւագ երգս յօրինեալ յեղյոյն
Արտասուք յաշիւս վըշտագին
Մըտերմուհիք քո կաթոգին:

Ո՛հ Երանիկ, 'ի քո՛ւն երթաս նընջել խոր
Նընջել յաւերժ 'ի ծոցն անդութ անգութ մօր.
Ուսք վարսաւոր քեզ հովանի
Շիրմիդ 'ի մատր միշտ կանգնեացի:

Մի՛ անթաց քո անցէ աշօք ուղեւոր
Ըզձինափայլ տեսեալ շիրմիդ փառաւոր,
Եւ 'ի վերայ ձեռամբ ճարտար
Քանդակեալ զողբես վըշտահար:

« Անցո՛րդ, բարեւ իմ ե՛րթ խօսեաց ծնողաց,
Բարեւ համայն կաթոգին իմ սիրելեաց.
Եւ նըմա որ յար 'ի լալիս,
Ողբերգաբար նըւագէ դիս:»

Ա. ՀԱՄԲԱՐԳԱՅԱՆ

Տ Ե Ղ Ա Ք Ր Ա Կ Ա Ն

ՊԵՅԱԶԻՏԷՆ ՄԻՆՉԵՒԻ ԿՍՐԻՆ

Ա.

Քանի որ Արեւելից հինաւուրց պետու-
թեան (պարսկական) մայրաքաղաքները կամ
մեծագոյն շահաստաններն ի Միջագետս էին
Արեւելեան եւ Արեւմտեան իրարու թշնա-
մի տէրութեանց, որք դրեթէ անվախճան
հակառակութիւն մ'ունեցած են միշտ ա-
ճեցուն ըստ իրենց գոյութեան, արշաւող
բանակաց սովորական արահետն էր Մալա-
թիա — Տիգրանակերտի մեծ պողոտայն, որ
կը յանգէր ի Բաբելոն, ի Պաղտատ, ի Տիգ-
րոն եւ:

Իսկ յորմէ հետէ Միջագետքէն դուրս այն

կողմեր փոխադրուեցան պարսիկ տէրութեան ոստաններն, ուր կը գտնուին Թէհրան, Դավրէժ, Ասպահան և, Կարին-Պաս-
յաղիտի ճամբան փոխանակեց առաջնոյն, զի նա է որ կը յանգի այդ վերջին մեծ չահաստաններն: Առաջին ճամբան բանած է գլխաւորապէս երբ աշխարհի վրայ կա-
յին Աքիմենեան Պարսիկներ, Պարթեաններ, Սասանեանք եւ Արաբացիք մէկ կողմէն եւ նոցա հակառակորդ տէրութիւնը միւս կողմէն, զոր օրինակ, Լիդիացիք (որք կռուեցան ընդ Կիւրոսի) հին Յոյնք, Մակեդոնիացիք, Հռոմայեցիք, Արեւելեան կայսերք: Երկրորդ պողոտայն գլխաւորապէս գործածողն եղած են վերջին Պարսիկք որոց անընդմիջական յաջորդութիւնն է այժմու սէֆեան հարստութիւնը, եւ Օսմանցիք, որ նախկին Արեւմտեան բոլոր պետութեանց իբր միայնակ ահեղ յաջորդ՝ զարկին Պարսիկները նախ ի Միջագետս եւ ապա յետ նոցա անտի հալածման ի վերնագագառն Ասիոյ՝ անցուղարձ ընելով այս երկրորդ մեծ արահետէն: Դեռ ներկայ դարուս մէջ երեք անգամ միայն ուրիշ պետութիւն մը (ռուսական) այս ճանապարհն գործածեք է, որ բաղդատմամբ հնոցն աննշան թիւ մը լինելով մասնաւոր յիշատակութեան մը միայն արժանի է:

Պայազլիտ - Կարնոյ այս կարեւոր ճամբան չ'ունի ի նուց յատուկ պատրաստութեան կամ յարդարման առաւելութիւն մը, բայց բնութեան օժտուած է մասնաւոր յատկութեամբ ի դիւրութիւն անցուղարձից ոչ միայն անհատներու, այլ եւ բանակներու եւ եւ հեծանքի կամ գրաստաբարձ կենդանիներու: Ըստ որում հարթածաւալ մակարդակ ունի երկու եւ եթ կարեւոր բարձրաւանդակով ընդմիջեալ, Դահարի լեռ ուր կը գտնուի Տէլէ-Պապայի հրա-
չակաւոր կիրճն, եւ Տէլէ-Պոյն-ի սարաւանդն որ ունի համանուն աւելի եւս մեծահոշակ կիրճն: Իսկ այս վերջին ժամանակներս կառավարութիւնն սկսած է խրճուղայ մը շինութիւնն որ գրեթէ աւարտելու մօտ է: Պայազլիտէն մինչ Կարին, տարածութիւնն ոչ պակաս քան 180 հազարամեր, Հասան-Ղալէէն ուրիշ քաղաք մը չկայ, թէ եւ այդ իսկ կարեւոր քաղաք մը չլինար համարուի: Ուստի պաշտպանո-

ղական գլխաւոր կէտերն են այժմ յիշեալ երկու կրճերն, մասնաւոր վերջինն, որք զօրաւոր պաշտպանութեամբ մը կրնան խիստ ազդու դիմադրութիւն մ'ընել կամ գէթ արշաւող թշնամին բաւական ժամանակ կասեցնել: Տէլէ-Պապայի կիրճն որոյ շուրջ ճակատամարտ մը տեղի ունեցաւ վերջին պատերազմին, 100 տկան մեթրէ աւելի բարձր լերկ ապառաժուտ լեռնակողմերու միջեւ 20 մեթր հազիւ լայնութիւն ունի: Երկու կողմի բարձանց վրայէն զօրաւոր հրաձգութիւն մը անհնար կ'ընէ թշնամոյն մուտն այդ կրճին մէջ, որքան ալ յամառ եւ աներկիւղ լինի: Իսկ կիրճն կորուսանելէ զինի նահանջել հարկ կը լինի մինչեւ ի Տէլէ-Պոյն, զի անհնար է այլուր դիմադրել առանց մեծ ճակատամարտի մը դաշտի վրայ: Այդ երկրորդ կիրճն քարամէջ անձկութեամբ մը չէ որ նշանաւոր ու դիմադրելի կը համարուի, այլ իւր երկու կողմեր ի բնութենէ հաստատուած բարձունքներուն շնորհիւ, որք մասնաւոր ամրութիւններ են, գոգցէս ի բնէ պատրաստեալ, եւ կ'իշխեն ո'չ միայն կրճին, որ լայն է գրեթէ մէկ հազարամերկ չափ, այլ եւ կրճին մուտքն աւարտող ընդարձակ գաղտատափին, ուր կարելի է հարուածել թշնամին ցորչափ երկայն լինի ուրբոց ձգողութիւնը, զի քանի մ'օրուան տարածութիւն ունի այդ դաշտն որ Բասենու բովանդակ գաւառը կը կազմէ: Հին ժամանակներն սակայն այս կարեւոր ճանապարհն այսպէս թափուր չէր մեծ քաղաքներէ որք դիմադրութեան մեծագոյն կայաններ կը լինին սովորաբար, այլ գէթ Արշակունի թագաւորաց ժամանակ գիտենք որ բուն իսկ ճանբուն գծին վրայ կը գտնուէին Բագրեւանդ կամ Բագաւան, Վաղարշակերտ եւ Վաղարշաւան քաղաքներն, իսկ ճանբուն հիւսիսային բամակին վրայ Արտաշատ եւ Դուին եւ Վաղարշապատ կարեւորագոյն քաղաքներն, թող զայլն որոց չ'տիրած թշնամին չէր կրնար բնականաբար, իւր ետեւ կամ պառկիկն վրայ թողով զանոնք, յառաջանալ առանց նահանջման գծին խզման երկիւղն կրելու: Մասնաւոր ուշադրութեան արժանի է եւ ի դէպ է աստ յիշել Վաղարշ թագաւորի աշխարհաշինութեան փափագին հաւասար ռազմագիտական հանձարն, ոչ միայն զի գիտցեր է ուղղակի կամ ան-

ուղղակի այս ճանքուն իշխող երեք քաղաքներն, Վաղարշապատ, Վաղարշապատ եւ Վաղարշապատ, շինելու հարկաւորութիւնն ետեւէ ետեւ, այլ եւ ընտրած է խիստ յարմարաւոր դիրքեր, օրինակի համար, վերջին քաղաքն միայն յիշենք, որ կառուցուած է եղեր Մուց (Հասան-Ղալէ Սուլի) եւ Երասխ գետերու միմեանց հետ խառնուած ճիշդ տեղն բլրակի մը վրայ, որոյ հետքն կ'երեւի դեռ աւերակաց բեկորներով եւ այրած ու փտած զանազան հին նիւթերու կտորներով: Իսկ ճիշտ Վաղարշապատին մօտ կը գտնուի այժմ Բէօֆթի-Բէօթի գիւղն, անունն առած Երասխի վերայի մերձակայ հոյակապ կամուրջն, որ կ'աւանդուի գործ լինիլ մի հովիւի, որոյ անուամբ է, կ'ըսեն, իւր Զօպան-Բէօֆթի-Բէօթի յորջորջումն: Մանաւանդ ջրոյ յորդութեան ժամանակ կարելի չ'է անցնիլ Երասխն, ոչ ալ Մուցն, առանց այդ կամուրջին գլխմելու, եւ ահա Վաղարշապատին ռազմական կարեւորութիւնը կը բացատրուի այսու, զի կամուրջը քաղաքին կցուած է: Իսկ Երասխի վրայ գրեթէ կարելի չ'է, գէթ հին ժամանակի արուեստներով, կամուրջ կանգնել այլուր Բասենու դաշտին մէջ, ըստ որում գետին եզերք ամէն տեղ փխրուն կամ աւազուտ է եւ անկարող գլխադրելու ջրոյն հոսանաց կամուրջի մը ծանրութեան ներքեւ:

Այս պողոտայն պատերազմական տեսակէտէ ի զատ նշանաւոր է նաեւ այնու գիւղերու միջեւ եւ արեւելից մեծագոյն ճանապարհն է որով կը կատարուին առեւտրական եւ ամէն կարգի խիստ ընդարձակ հաղորդակցութիւնը, մանաւանդ ցորչափ կովկաս փակ մնայ Պարսկաստանի համար ուսական մաքսային դրութեան շնորհիւ, ինչպէս է այժմ մի քանի տարիներէ հետէ: Եւ այդ էր պատճառ գլխաւորապէս այն երեւոյթին որ մեր այդ ճանապարհէն անցած ատեն (1884 սեպտեմբեր ամսոյն մէջ) մէն մի քայլափոխին գրեթէ կը պատահէինք ուղտից եւ այլ գրաստուց ահեղ երամակաց (հարիւրաւոր ձիերու, ուղտերու, էջերու միանգամայն) որք կը տանէին ի Պարսկաստան եւրոպական ապրանքներ անհնարին քանակութեամբ, ոյց վրայ գաղափար կրնայ առնուիլ մանաւանդ ականատես լի-

նելով այն անընդհատ կարաւանաց, որոց ոմանք մինչեւ 800-900 ուղտ կը պարունակեն, թող զայլ գրաստու: Եթէ երբէք կասկածելի լինի իսկ Թուրքիոյ արեւելեան գաւառաց մէջ երկաթուղեաց շահաւէտութիւնն առաջի երկրին անբաւականութեան, աներկբայելի է սակայն շահագործութիւնն մի գծի որ ձգուի Տրապիզոնէն ց'ասհմանազլուխ Պարսկաստանի սոյն պողոտային վրայէն:

Հասան-Ղալէն ի զատ այս գծին վրայ փոքր ինչ կարեւոր տեղերն են Գարս-Բիլեի եւ Սալիբի աւաններն, համանուն ֆայմա-հաճութեանց կեդրոնավայրեր, և Իւլ-Բիլեի Ս. Յովհաննու մեծահոգակ վանքն ոյր առջեւէն հոսող Եփրատին մէջ Տրապիզոն թագաւորն մկրտուեցաւ չորս միլիոն ժողովրդով: Այդից զատ հեռի չ'է եւ կից իսկ է Նպատ լեռն որ կը նայի իւր առջեւ տարածեալ Զիրաւ դաշտին վրայ, համանուն ճակատամարտիւն եւ Մեհրուժան անգղա-մին անդ սատարմամբն անուանի: Այդ դաշտէն կ'երեւին հաւասարապէս թէ՛ Մասիս եւ թէ՛ Սուկաւէտ լեռներն, մին արեւելքէն, միւսն արեւմուտէն: Հիւսիսակողմն կը ձգուին Մաղկեանց լեռանց գոտիներն փոքր ինչ հեռու, հարաւակողմն են Մասիսի շղթայքն որ զԹուրքիա կը բաժնեն Ռուսիայէն:

Այլ այս մանրամասնութեանց եւ յիշեալ աւաններու տեղագրութեանց վրայ կը խօսինք յաջորդ յորդեաժով:

1886 Մուշ

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

Կը յիշուի թէ վերջին Թուրք-ռուսական պատերազմին ժամանակ, Թուրքական «Հիզմէ-Բահման» մարտանաւն օդն հանուեցաւ թշնամոյն կողմէ Գանուբի մէջ: Երբ Ռուսներն իմացան թէ մարտանաւը կը պատրաստուէր դիմել փոխել, արագապէս սպառազինեցին չորս թեթեւ նաւակներ, եւ յանդգնութեամբ յառաջ խաղացին: Առաջին ծովաւաճառիկն այն ատեն միայն նշմարուեցաւ օսմանեան պահակէն երբ հաղիւ վաթսուն մեդր հեռի էր: Երբ վաւաճառիկն, առանց ժամանակ կորսնցնելու, յանդգնութեամբ արձակեց ծովաւաճառն ընդդէմ թըշ-

նամի նաւն, որ հարկւր քելոկրամ վառօգին զօրութեամբ վարէն վեր բացուեցաւ եւ տանն վայրկեան մէջ ընկղմեցաւ : Այս ձեռնարկին, որ մեծ ուշադրութիւն գրաւեց եւ յեղափոխութիւն մտցուց նաւային դրութեանց մէջ, գիւցազանց միոյն կը վերաբերին հետեւեալ սրտայոյզ պատմութիւնն, զոր կը թարգմանենք « Ֆիկարօ » գրական շաբաթաթերթէն :

Լ. Բ.

ՌՈՒՍԱԿԱՆ ԾՈՎԱՌԱՐԱԿԻՐԸ

Թուրքի նաւահանգիստը կը գտնուէինք, ռուսական Լիւֆթս երկկայմին վրայ :

Ֆրանսական ծովային սպայից ընկերութեան մէջ ծանօթացած էի ռուսական նաւուն սպայից հետ, եւ սոքա հրաւիրած էին զիս այն ճաշին զոր կուտային իմ նաւատորմի բարեկամացս :

Ռուսերը լաւ խմաններ են, ծանօթ իրողութիւն մ'է այս, այլ իրենց սպայները մանաւանդ կը հաստատեն այդ համբաւն : Եւ Ֆրանսացի նաւազները գիտեն թէ Ջարին նաւուց կողմէ եղած ամեն հրաւերներ կը վերջանան գենարբուքներով որոց վրայ ընդ երկար կը խօսուի : Իրաւ է թէ ամեն ինչ կ'անցնի բարեկիրթ մարդոց միջեւ, անձայն անշուկ, խորհրդապահութեամբ : Պահակներ կը դնեն դրան առջեւ՝ սլառ ու իրեղով որ չթողուն ոչ ոքի ներս մտնել, եւ կը խմեն, կը խմեն, որչափ որ կրնան խմել :

Այդ իրիկուն, ամեն ինչ կ'անցնէր ըստ սովորականին : Ճաշն հեշտահամ եղած էր, սքանչելապէս կարգադրեալ. շատ կերած, շատ խմած, եւ շատ ալ խօսած էինք : Մընաց որ ամեն ինչ հաճոյալի կերպիւ : Ֆրանսական լեզուն, ռուսական չրթունքներէ անցնելով, տարօրինակ շեշտ մը կ'առնու որ կը հիացնէ զիս, եւ այդ սպայները Ֆրանսերէն կը խօսէին նմա հանդիպած առաջին Պուլվարցիիդ : Ամենքն ալ հաճոյակատար ու նրբամիտ էին, ամենքն ալ ազնուաբարօրոյ : Այդ ցեղին մէջ ազնուապետական ձեւերու հրապոյր մը կայ որ կը յանկուցանէ : Արդեօք անոր համար որ յարածուն ռամկավարութեան հարթիչ մակարդակը տակաւին հասած չէ՞ անոնց որպէս այլուր :

Օթեւանին սպասուորները, սեւ լոգիկով եւ սպիտակ փողպատով, գաւաթները շամբանիս կը լեցնէին անդադար : Ռուսաց

սիրական գինին է այդ : Ուրիշ ըմպելիներ ալ կային, Ֆին, Գիւմէլ եւ, սակայն ամենքն ալ նախամեծար կը համարէին շամբանիս, մանաւանդ ընկերս որ իրարու վրայ կը պարպէր իւր բաժակն : Գեղադէմ երիտասարդ մ'էր նա, բարձրահասակ եւ յաղթական, խառնիչահեր, կապոյտ աչերով, պողպատի կապոյտ մը որ մերթ ընդ մերթ կը բոցաւառէր պաղ նշոյլով մը : Իւր խօսակցութիւնը կարի հաճոյական էր : Կը ճանչէր Փարիզը, Պուլվարը, այն տեղերն որոյ վրայ ամեն մարդ կը խօսի այլ ուր ընտանիները միայն կը յաճախեն : Խօսեցաւ ինձ Գոմէտի - Ֆուանտէզի եւ Էտէնի վրայ, Տիկին տը Ք...ի եւ Օրիորդ Փ...ի մասին, փարիզեան դարձումներով, լեզուով մը զոր չափտի մերժէր ամեն վայելչաշուք ակնբականը : Եւ գաւաթներն յար կը յաջորդէին միմեանց : Բաժակը բռնած էր բիւրեղեայ նուրբ ոտքէն, սպասաւորին կ'երկնցնէր զայն, եւ ոսկեգոյն ըմպելին կ'անհետանար իւր կոկորդին մէջ :

— Ըսել է թէ վաղը Փարիզ կ'երթաք, հարցուց :

— Երթալու միտք ունէի, այլ ուղեւորութիւնս ետ պիտի ձգեմ՝ ներկայ գլուխուելու համար ծովառւթոց փորձերուն որք ի մօտոյ տեղի պիտի ունենան նաւատորմին կողմէ :

Սարսուաց, չողուն փայլ մը անցաւ աչերուն մէջէն եւ թուեցաւ ինձ թէ յանկարծ գաղափար մը կը տանջէր իւր միտքն :

— Այդչափ շատ կը հետաքրքրուիք ծովառւթերով :

— Այո՛, Այնքա՛ն սոսկալի գէնք մ'է : Ամեն մարդ անով կ'զբաղի եւ անոր վրայ կը խօսի :

— Ա՛հ, իրա՞ն Լաւ ուրեմն, մտիկ ըրէք, ոչ ոք կրնայ ծովառւթոց վրայ խօսիլ ինձ նման, ոչ ո՛ք.....

Արմուկները սեղանին դրաւ եւ խոր մը տածմանց մէջ ընկղմեցաւ :

— Ծովառւթոց խօսքը լեցի՞ր վերջին թուրքօ - ռուսական պատերազմին ատեն, հարցուց յանկարծ :

— Անշուշտ :

— Ես էի. որ օդն հանեցի թրքական մարտանաւը.....

Իւրաքանչիւր բառը կը շեշտէր եւ զիս

կը դիտէր՝ իբր թէ հասկնալու համար դիմացս արտայայտութիւնը :

— Դժբէ :

— Սոսկալի բան մ'է՛, չէ՞, սոսկալի՛ բան մը

Նորէն լռեց, յետոյ չարունակեց .

— Ո՛հ, ինչե՛ր կուտամ այդ բանն ըրած չըլլալու համար Դժբէ կը հիանաք վրաս..... Ինձ ըսին թէ ըրածս հիանալի գործ մ'էր, թէ դիւցազն մ'էի այո՛, դիւցազն վարձատրութիւններ, խաչեր, ատիճաններ տուին ինձ Լաւ ուրեմն, ամեն ինչ կուտայի եւ տակաւին չեմ գիտեր ինչ այդ բանն ըրած չըլլալու համար Օ՛հ, եկուր պատմեմ ուրեմն թէ ի՛նչպէս եղաւ :

Եւ, ոչ թէ անշուշտ զիս հետաքրքրելու, այլ սրտին վրայ ծանրացող խոստովանութիւն մ'ընելու եւ միտքն հանդարտելու համար, հետեւեալը պատմեց ինձ .

— Դանուբի վրայ կը գտնուէինք, կը յիշէք անշուշտ Քանի մը օրէ ի վեր խաւիսիս նետած էինք օսմանեան նաւատորմին մօտ, հազիւ քանի մը հազարամեդր հեռի, այլ իրարմէ ծածկուած գետին ծամածռու դարձուածներով Կարծես թէ ծով լինի, այնչափ լայն եւ խորախոր է այդ տեղն: Շատ կը դիտէինք զիրար, մեծ զգուշութիւն կ'ընէինք : Այլ շարժումը դժուար է անդ, աւազակոյտերուն մէջտեղ, եւ անակնկալ յարձակումէ մը չէինք վախնար : Կ'սպասէինք սակայն որ Թուրքերն, աւելի բազմաթիւ եւ լաւագոյնս սպառազինեալ, յարձակում մը ընեն մեր վրայ : Չըրին : Այն ատեն որոշուեցաւ ծովառմբով օդն հանել զանոնք : Ինձ յանձնեցին այս արշաւանքն ընող մակոյկին հրամատարութիւնը : Որովհետեւ այդ ժամանակ ծովառմբերն այժմեան գիտցած գործիքնիդ չէին : Գործն աւելի պարզ էր, այլ ոչ այնքան դիւրին : Հարկ էր երթալ ծովառումբը զետեղել նաւուն կողին, բռնկցնել եւ ետ քաշուիլ :

Խաւարամած գիշեր մը մեկնեցայ, մինչ չորս դին կը տիրէր խոր հանդարտութիւն մը, զմեզ չըջալատող լայնածաւալ դաշտերուն հանդիսաւոր լուսութեան մէջտեղ : Նաւազներն այնպիսի մարդիկ էին որոց կրնայի վստահիլ, քաջասիրտ, հաստատամիտ, եւ յոյս մեծ էր : Ձեռնարկը դժուարին էր սակայն, եւ հրամանատարը, մեկնման մի-

ջոցին, ձեռքս սեղմած եւ «Աստուծո՛յ շնորհիւ» ըսած ատեն չէր ծածկեր սրտայուզութիւնը : Կա՛մ յաջողելու էր եւ կա՛մ..... Սրդարեւ, եթէ Թուրքերը նշմարէին այս փորձն, հաւանական էր որ չէինք կրնար ձողողորիլ : Բայց, որո՞ւ հոգ, հաճոյքս միայն յուզեալ էի : Խորհեցէ՛ք անգամ մը, նոր փորձ մը փորձել, յեղափոխութիւն մը մուծանել ծովային գործոց մէջ Եւ յետոյ, եթէ յաջողէինք, ի՛նչ արդիւնք մակոյկով մը անհետացնել յաղթարեւոտ նա՛ւ մը :

Թիւերը փաթթուած էին խժուծով, ձայն չէինք հաներ, եւ անդրդուելի որոշմամբ կը յառաջանայինք : Վերջապէս, որոշեցի օսմանեան նաւատորմն : Ծովակալին մարտանաւն առջեւի կողմն էր, առաջին կարգը : Իւր ահագին կոյտն ընդարձակ նկար կը յօրինէր հանդարտիկ ջուրը վրայ : Չայն ցնտրած էի . . . ձայն ձուռն չէր լսուեր, ոչինչ... Թշնամին երբէք չէր կասկածեր . . . մտքն անցուցած չէր այդ վտանգն . . . Եւ գրեթէ լոյս չկար : Խաւիսիս նետած էին, անընթացապահով :

Մտեցանք : Այդ վայրկեանին սիրտս ուժգնութեամբ կը բարախէր . վստահ էի յաջողելուս վրայ : Մարդիկս, առանց սխալ շարժում մ'ընելու, առանց ճիկ մը հանելու, յուշիկ յուշիկ կը թիափարէին : Բոլորովին մօտեցած էինք, եւ անոնք չէին պաշտպաներ զինքեանս . . . Ծովառումբը զետեղեցի : Ո՛հ, երբ նաւուն կողին դրի զայն, զեղուն ուրախութիւն մը գրաւեց զիս . . . Պոռալու, թշնամին հեգնելու փափաք ունէի : Այլ ամեն ինչ լմնցած չէր : Մակոյկը դարձուցինք, նաւաստիք ձեռք առին թիւերը եւ քանի մը ուժեղ հարուածներէ ետք թշնամիէն հեռացեր էինք : Յայնժամ ահաւելի աղաղակ մը բրդաւ նաւուն մէջ, ահաւելի եւ յանկարծական աղաղակ մը : Պահակ զինուորները բարձագոյ աղաղակներ կ'արձակէին : «Ծովառումբ» կը պոռային իրենց լեզուով, «Ծովառումբ» :

Պէտք է ըսել ձեզ թէ Թուրքերը, տարտամ կերպիւ միայն ճանչելով ծովառումբերն, հրէշաւոր դաղափար մը կազմած էին այդ մասին : Մահու եւ քանդման դիւային հրանօթ մ'էր այն իրենց համար . . . Նոյն իսկ մտքերնուն չէին անցունել կրակ ընել մեր մակոյկին վրայ որ հազիւ երկերիւր

մեղր հեռի էր, եւ չընկղմելու համար հարկ եղած հեռաւորութիւնը ձեռք ձգելուս պէտք արձակեցի ելեկտրական հոսանքիւթը . . . Եւ յանկարծ աղաղակ մը բարձրացաւ, ահաւելի, գերմարդկային . . . Ո՛հ, այդ աղաղակն . . . ո՛չ, ո՛չ, կարելի չէ հասկնալ, կարելի չէ երեւակայել . . . ես քաջասիրտ եմ, կրնաք հաւատալ, անվեհեր եմ, բայց այդ աղաղակն . . . ո՛հ . . . Եւ ամեն ինչ անդնդաոսող եղաւ, նաւն եւ զինուորը, սպայներն եւ նաւաստիք, այդ արհաւիրանաց եւ սարսափի աղաղակին մէջ :

* * *

Գլուխն երկու ձեռացը մէջ առաւ, ալանջները խցելով մակեղնութեամբ, եւ աչերն, այդ անմոռանալի տեսեան առջեւ խոշոր բացուած, անբխիթ կը նայէին :

— Ի՞նչ քստմնելի բան, ըսի, խորապէս յուզեալ : Նաւուն մէջ շատե՞ր էին :

— Շատե՞ր . . . ի՞նչ գիտնամ . . . Եւ յետոյ, որո՞ւ հոգ . . . այդ չէ որ զիս կը տանջէ . . . Աւերումն, մահն, պատերազմի արդիւնք են, անհրաժեշտ են : Ինչ որ կը պակուցանէ զիս եւ զոր չեմ կրնար մտքէս վտարել, աշխարհը ինչ մէջ այդ զարհուրագին աղմուկն է : Միշտ կը հալածէ զիս, ամենուրեք : Արդեօք լաւագոյն չէ՞ր անդնդաոսող կորնչիլ օսմանեան նաւուն հետ : Մեռնի՛ւ : Այդ դաղափարը բնաւ չհեռանար մտքէս : Յաճախ, ցերեկը, արեւ արեգակ օդով մը, երբ ամեն ինչ լոյս եւ կեանք է շուրջս, կանգ կ'առնում, աչերս կը դուրս գան . . . եւ կը լսեմ այդ աղաղակն : Այլ մանաւանդ իրիկունը, գիշերը, երբ աղմուկ մը կը հասնի ականջիս, կառքի մը թաւալումը, հեռաւոր գոչիւն մը, ու եւ է չըլուկ մը չէ որ կը լսեմ, ո՛չ . . . թշնամին է որ կը գոռայ գիշերին մէջ . . . Անկէ ի վեր ժամանակ անցած է, շատ ժամանակ, այլ մոռցած չեմ, չեմ կրնար մոռնալ . . .

Լուեց, յետոյ վրաս յառելով իւր մոլորուն աչերն, պաղատող ձայնիւ մ'ըսաւ . . .

— Ի՞նչ ընեմ . . . օ՛ն, ի՞նչ ընեմ . . . ըսէ՛, չե՞մ կրնար . . . Բայց ոչ, անհնար է, երբէք . . .

Սակայն քիչ մը հանդարտեցաւ, առաւ բաժակն որ սահեցաւ իւր դողդոջուն ձեռ-

քէն եւ գետին իյնալով ջարդուբոսոր եղաւ : Սպասաւոր մը փութաց ուրիշ գաւաթ մը բերել, եւ լեցուց զայն անմիջապէս :

.

Ամեն կարելի բաժակներն առաջարկուած էին, այլ միշտ կը խմէին : Շամբանիայի շիշերն անդադար կը պարսպուէին եւ ֆիւմէլը կ'անհետանար :

Հեղձուկ տաք մը կը տիրէր սրահին մէջ, երկաթեայ ձեղունին ներքեւ :

Լուսամուտները բացին : Օդի հոսանք մը եկաւ մեր երեսին, ծովային սղոխ մը, սուր հոտերով եւ զովացուցիչ : Եւ յանկարծ, մերձակայ նաւէ մը, աղաղակ մը բարձրացաւ, սլահակ նաւաստւոյն աղաղակն, կանոնաւոր, դաշնաձայն : Դրացիս, որ մրափել կը թուէր, յանկարծ բռնեց թեւը, ու ժգնութեամբ սեղմեց զայն եւ աւելի մօտենալով՝ « Կը լսէ՞ք, ըսաւ, կը լսէ՞ք : » Իւր աչերը խոշորցան, աւելի բուռն սոսկում մը կծկեց իւր դէմքն, ձեռքը բռնած նուրբ բաժակը մատներուն մէջ ջղաձգաբար սեղմուելով կտոր կտոր եղաւ, եւ թեւս թող տալով, կոկորդին մէջ խղդուած երկար հեծեծանքով մը, գետին գլորեցաւ բովանդակ ծանրութեամբս :

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻՔ

Թիի	6.	(Մասիս թիւ 3798)
»	12.	» 3804)
»	13.	» 3805)
»	14.	» 3806)
»	15.	» 3807)

ԽՆԴԻՐ

Թիի 16.

Շ շառաւիղն է շրջանակի մը՝ որոյ շրջագծեալ է Ա Բ Գ Դ զուգահեռագիծ քառակողմը (parallélogramme) :

Ապացուցանել.
10. Թէ սոյն բառակողը շեղանկին մ'է (losange).
20. Թէ ունինք.

$$\frac{1}{\alpha \cdot \alpha^2} + \frac{1}{\beta \cdot \alpha^2} = \frac{1}{4 \cdot \alpha^2} \text{ հաւասարութիւնը:}$$

Խ Ն Դ Ի Ր Թ Ի Ի 12.

Լ ՈՒ Մ ՈՒ Մ Ն

Սոյն խնդրոյ վերաբերեալ, մեզ զրկը-
ուած լուծմունք սխալ ըլլալով, կը յետա-
ձգենք լուծումն, սպասելով որ ուղիղ լու-
ծումներ ընդունինք:

Տ. Պ. Սրապեան. Սղերդ. — Թիւ 11 խնդրոյ լու-
ծումնիդ ուղիղ է: — Խնդրածնիդ թղթատարին
յանձնեցինք: Ձեր Մասիսի բաժանորդագրոյն հետ,
դորա գինն եւս ընդունել կը յուսանք:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գործաւորական յուզումներն. — Անգլիա եւ
Ֆրանսա — Պուլկարական եւ Հելլենական խնդրոյն
վիճակը. — Կ. Պոլսոյ դեսպանութիւնը. — Վերջին
հեռագիրք:

Հեռագրական Գործակալութիւնը կը
ծանուցանեն թէ Անգլիոյ պարսպ գործա-
ւորաց յուզումը կը շարունակուի տակաւին:
Այս ընկերվարական շարժումն որ Լոնտո-
նէն սկսաւ, կը տարածուի Մեծին Բրիտա-
նիոյ զանազան կողմերն, ի Պիրմինկէմ ինչ-
պէս եւ ի Նոթինկէմ, ի Նորվիչ ինչպէս եւ
ի Լայսէսթըր. միթինկներ կը գումարուին,
վաճառատունք կը կոխուին, ոստիկանու-
թիւնը կանարդուի եւ գործաւորաց կար-
միր գրօջը կը պարզուի բազում շէնքերու
վրայ:

Եւրոպական սուբհանդակն բերաւ մեզ
մանրամասն տեղեկութիւններ այդ անկար-
գութեանց զորս հարկ չէ ի մէջ բերել աստ-
անօթութիւն եւ անգործութիւն կը մղեն
այդ գործաւորներն յառաջ քաշելու, եւ ո
գլխից թէ վերջն ո՛ր պիտի յանգի: Առ
այժմ շարժման պարագլուխներէն մէկ քա-

նին գրաւորապէս ներկայեցին իրենց իա-
ւաքը Լոնտոնի Գաղաքապետին եւ ուրեք
ուրեք նիւթական նպաստներ բաշխուեցան
կարօտելոց:

Փարիզի մէջ ալ այս պահուս թեթեւ
կերպով մը կը յուզուին գործաւորներու եւ
գործարաններու խնդիրներ, սակայն խոր-
հըրդարանական շրջանակի մէջ: Ֆրանսայի
Երեսփոխանական Ժողովոյ փետրուար 11 ի
(յուլի 30) նիստը գրաւուեցաւ ընկեր-
վարական խնդրոյ մը վիճաբանութեամբ զոր
յարոյ Պ. Պազլի գործաւոր դասէն եկած
երեսփոխան մը:

Երբ կը խօսուի Անգլիոյ եւ Ֆրանսայի
ընկերվարական շարժմանց վրայ, դիտել
արժան է որ անգլիացի գործաւորաց ցոյ-
ցերը բնաւ անդեցութիւն չունեցան Լոն-
տոնի Պորսային վրայ, մինչ միեւնոյն ան-
կարգութիւնք եթէ պատահէին ի Փարիզ,
արժէթղթոց գինն անմիջապէս կ'ընկար:
Այդ երկու Ժողովուրդը կարծես տարբեր
կերպով կը ներդրած ունին Ժողովրդական
շարժումներէն. գործաւորական յուզմանց
ծագման օրերուն մէջ ո՛չ ոք ի Լոնտոն մըտ-
քէն անցուց երթալ իւր դրամն առնուլ
Պանքայներէն, ընդհակառակն անգլիացի
դրամատէարք տեսակ մը միսթարութիւն
կ'զգային մտածելով որ իրենց հարստութիւն
յապահովի էր դրամատանց երկաթեայ
դռներուն ներքեւ: Այսօրինակ ոչ արա-
գայից մէջ, Ֆրանսացին տարբեր կերպիւ
կը շարժի, եւ մեծամտանց առաջին գործը
կը լինի իրենց դրամն առնուլ Պանքայնե-
րէն:

Պ. Ելատսդընի նախարարութեան կողմ-
մակերպութիւնն ամբողջացաւ քանի մը նոր
անուանումներով: Իրլանտայի փոխարքա-
յութեան պաշտօնը, զոր պահպանողական
նախարարութիւնը կուգէր ջնջել, յանձ-
նուեցաւ Լորտ Ապէրտինի: Տը Մորէյ Մար-
գիզն անուանեցաւ հանրօգուտ շինութեանց
նախարար եւ Սըր Լ. Բլէյքէյը՝ աշակերտ
գերմանացի համբաւաւոր քիմիագէտ Լիէ-
պիկի եւ երբեմն քիմիագիտութեան ուսու-
ցիչ էտիմպըրիի Համալսարանին մէջ, կոչ-
ուեցաւ կրթական նախարարութեան գլու-
խը: Սըր Բլէյքէյը քանի մը տարիներէ ի
վեր Անգլիոյ վարժարանաց ընդհ. քննչի
պաշտօնը կը վարէր:

Պ. Կլատադընի նախարարութիւնն՝ այս նոր տարրերով զօրացած, իւր գլխաւոր ուղի կը դարձնէ Իսլամական խնդրոյն եւ Արեւելեան տագնապին վրայ։ Այս վերջնոյն մէջ, դէթ առ այժմ, Անգլիոյ նոր նախարարութիւնն հաստատածիս կերեւի Լորտ Սալըզպըրիի աշխարհավարութիւնը չարունակելու։ Արտաքին գործոց նախարար Լորտ Բոզզէրի յայտարարած է զայս Լոնտոնի հեղեհական նորընտիր դեսպանին, յանձնարարելով նա որ Յունաստան զէնընկէց լինի եւ զգուշանայ ո՛ր եւ է նաւային գործողութենէ։ Բայց Հելլէնք խուլ կերեւին այս աղարարութեանց եւ կըսուի թէ Աթէնքի մէջ ո՛չ միայն ժողովուրդն, այլ եւ կառավարութեան անդամք յետին ծայր գրգռուած են Տէրութեանց ոմանց թշնամական ընթացքէն։ Այս զայրոյթ եւս առաւել կը սաստկանայ անտարակոյս, երբ հելլէնք կը տեսնեն թէ պուրկարական խնդիրը քիչ չառ բարւոք վիճակ մը կստանայ։ Իրաւ է թէ տէրութիւնը, եւ մասնաւորապէս Ռուսիա, քիչ մը յապաղեցին իրենց պատասխանն ի մասին թուրքո-պուրկարական Պայմանագրոյն, բայց վերջապէս տուին։ Պէրլինէն Սխաբարի ուղղեալ հեռագիր մը կը յայտնէ թէ Գերմանիա համաձայն է միւս Տէրութիւններն ընդունիլ վերոյիշեալ համաձայնութիւնը, պայմանաւ որ Թուրքիոյ եւ Պուրկարիոյ զինուորական փոխադարձ օգնութեանց վերաբերեալ յօդուածը ջնջուի Պայմանագրոյն մէջէն եւ առանձին խորհրդածութեան նիւթ լինի, Այս առարկութիւն ուղղակի Ռուսիոյ կողմէ կուգայ ինչպէս կերեւի, նա եւ ուսական դեսպան Պ. Նէլիտովի միջոցաւ երկու օր առաջ Բ. Իրան մատուցուած պատասխանագրոյն մէջ։

Դեսպանխորհրդոյ գումարման համար վերջնական որոշում մը չիկայ տակաւին։ Կարելի է ըսել նաեւ թէ ժամանակն ևս այնքան յարմար չէ Թօփհանէի պաշտօնատան մէջ սկսուած նիստերը կանոնաւորապէս շարունակելու, վասն զի մայրաքաղաքիս դեսպանական մարմինը մասամբ կազմալուծեալ վիճակի մէջ կը գտնուի, եւ բընականաբար խորհրդականներով եւ առժամեայ գործակատարներով չէ որ կը կազմուի Խորհուրդ մը որ կոչուած է վճիռ ար.

ձակել արեւելեան տագնապին վրայ։

Ամէն աւելի է որ արձակուրդով փարիզ կը գտնուի Փրանսական դեսպան տը Նօայլ Մարքիզն։ Իսկ Իտալական դեսպան Քորթի կոմսն՝ Կ. Պոլսոյ դեսպանաց երկցագոյնն եւ հմտագոյնն, այս չորեքշաբթի օր վերջնապէս թողուց օսմանեան մայրաքաղաքն, ուղեւորելու համար ի Լոնտոն ուր փոխադրուած է նոյն պաշտօնով։ Քորթի կորսին հեռացումն անտես չկրնար անցնիլ եւ նորա բացակայութիւն զգալի պարապ մը կը թողու գիւտնադիտական մարմնոյն մէջ, վասն զի կոմսը ո՛չ միայն երկար տարիներէ հետէ իւր կառավարութիւնն արժանաւորապէս կը ներկայացնէր Վեհ. Սուլթանին մօտ, այլ եւ ճանչցուած էր իրր երեւելի գիւտնադէտ մը, եւ անցեալ տարի, եթէ չէր սխալիր, մինչեւ իսկ խօսք կար կոչել զինքը Իտալիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնին։

Զուգադիպութեամբ մը, երբ Քորթի կոմսը չորեքշաբթի առաւօտ կը մեկնէր մայրաքաղաքէս ի Լոնտոն, նոյն օրը Լոնտոնէ կը մեկնէր Սըր Էտ. Թորնթըն Կ. Պոլիս գալու համար։ Անգլ. նորընտիր դեսպանը՝ նախորդ դեսպան Բեդֆորդիկի, կուգայ յաջորդել Լորտ Տըֆրինի՝ այժմ փոխարքայ հնդկաստանի՝ որոյ թողած պաշտօնն առժամապէս կը վարէ Սըր Հուայդ. շատ իսկ էր եթէ այսքան ժամանակ, եւ մանաւանդ քաղաքական այսպիսի կարեւոր օրերու մէջ Կ. Պոլսոյ անգլ. դեսպանատան գլուխ գտնուեցաւ առժամեայ եւ երկրորդ կարգի դեսպան մը։ Սըր Հուայդ մէկ քանի շաբաթ դեսպանատան ընթացիկ գործերն յանձնելէ յետոյ Սըր Թորնթընի, պիտի մենի ի Պոլքըէ։

* * *

Աւասիկ Արեւելեան խնդրոյն վերաբերող նորագոյն հեռագիրք որք բացայայտ կերպիւ կը պարզեն Անգլիոյ հետեւելիք աշխարհավարութիւնն ընդդէմ Յունաստանի։

Լոնտոն, 18 փետր.

Տեյլէ Նէ-զ վերստին խօսելով Յունաստանի դէմ նաւային ցոյցի խնդրոյն վրայ, կը յարէ։

«Գերմանական և ռուսական նախախնայ-
բերը կ'սպասուեն Սուտայի ծովածոցն . ի-
րենց գալառէն անմիջապէս յետոյ, նիւա-
կակից նախախնայներն Սալամինէ պիտի եր-
թան ցոյց տալու համար յոյն ծովակալին
թէ Տէրութիւնը լրջօրէն կը խօսէին երբ կը
յայտարարէին թէ պիտի արգելուն պատե-
րազմն :»

Լոնտոն, 19 փետր.

Երեսփոխանական Ժողովն այսօր վեր-
սկսաւ իւր նիստերը. — Պ. Կլաուսդոն պար-
զելով նախարարական յայտագիրն, ըսաւ .
Ուրախութեամբ կը հաստատեմ եւրոպա-
կան ներդաշնակութեան գոյութիւնը . —
«Արեւելեան Րուսիոյի գործերը տակաւին
ամբողջապէս լուծուած չեն : Գալով Յու-
նաստանի, առանց փոփոխման պիտի ուա-
հենք մեր նախորդաց յանձնառութիւնքն և
աշխարհավարութիւնն, իբր լաւագոյնն ի
պահպանութիւն խաղաղութեան, հանրային
իրաւանց և Յունաստանի իրական շա-
հուց :» (Մագաւարութիւն) :

Ք Ա Ղ Ո Ի Ա Ս

ՆԱԲԱԾԱԿԱՆ ԼՐՈՅ

Ն Ե Ր Ք Ի Ն

Պետական Խորհրդոյ նախկին նա-
խագահ Վսեմ. Արիֆ փաշա, որ նախ
վանայ և ապա Արշիպեղապետի կըղզ-
եաց կուսակալ անուանած էր, երէկ
աւտորիական Էնթոնէ շոգենաւով մեկ-
նեցաւ մայրաքաղաքէս ի Քիոս, իւր
նոր պաշտօնի գլուխն անցնելու հա-
մար :

Սուրբէն կ'իմանայ թէ Պ. Գլապա-
անուն անձի մը պատրաստած յատա-
կաձեւին համաձայն մենաշնորհ պիտի
տրուի Երկրագործական Սենեկին, Ա.
նաւաւորութի մէջ մեծ երկաթուղւոյ մը
շինութեան համար :

Այս երկաթուղւոյ գիծը վեց ճիւղ-
ի պիտի բաժնուի և պիտի երթայ

մինչեւ Գոնեա, Սերաուտիա, և Ատանա :
Շինութիւնը պիտի աւարտին ութ
տարուան մէջ : Շինութեան ծախուց
համար վեց միլիոն բաժնետոմս շրջա-
բերութեան պիտի հանուի, իւրաքան-
չիւրն ութ Մէճիտիէ արժէքով : Բաժ-
նետոմսերու մէկ միլիոնը մայրաքաղա-
քիս մէջ և չորս ու կէս միլիոնը գա-
ւառաց մէջ շրջաբերութեան պիտի
հանուին, իսկ մնացեալ կէս միլիոնը
շահակցական սնտուկներու կողմէ պի-
տի գնուին : Նկատելով որ բաժնետոմ-
սից արժէքը մէկ անգամէն վճարել
դժուար կը լինի Ժողովրդեան, որոշ-
ուած է որ տարին մէկ Մէճիտիէ մի-
այն վճարուելով ութ տարուան մէջ
ամբողջանայ բաժնետոմսից վճարումն :

Գծերու շինութիւնը աւարտելէն
յետոյ, երկաթուղւոյն ընդհանուր վար-
չութիւնը պիտի յանձնուի օսմանեան
ընկերութեան մը և դրամական ու
հաշուական մասն ալ պիտի յանձնուի
Օսմ. Կայս Պանքային :

Այս մասին ծրագիր մ'եւս մատու-
ցուած է Բ. Դրան որ Արքունի Նաւա-
րանի Շինութեանց Յանձնաժողովին յը-
ղած է զայն ի քննութիւն :

Թղթատարական և հեռագրական
վարչութիւնը պաշտօնապէս ծանուցած
է բոլոր նահանգաց թէ յառաջիկայ մարտ
ամսոյ սկիզբէն նամակադրոշմներու գոյ-
նը և ձեւը պիտի փոխուի և հիները
պիտի ջնջուին. ուստի ամեն անոնք որ
հին նամակադրոշմներ ունին, պարտին
թղթատարական վարչութեան դիմելով
հիներու փոխարէն նորեր ստանալ : Մար-
տի սկիզբէն, այսինքն նոր նամակադր-
ոշմներու շրջաբերութեան հանուելէն
յետոյ, եթէ հին նամակադրոշմով նա-
մակ յանձնուի թղթատարութեան, օ-
րինաց տրամադրութիւնք ի գործ պի-
տի դրուին :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեւն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԼԻ ԼՐԱԳՐՈՅ